




ՍԻՈՆ

Կրօնական Գրական
Բանասիրական



ՊԱՏՅԱԿԱՆ ՀԱՅ ԵՐԱԿԱՆ ԸՆԴ ՊԱՏՐԱԳՈՎՈՒՅՑ

ՆՈՐ 1956

L.
ՏՐԵՅՆ

«Սիոն» մայլ արմենական շիք, գունակ, արվեստ, գուգակ, լուսական

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

— «Նախանձ տան և կերիցք զիս»

ԵՐԵՒ

257

ԿՐՈՆԱԿԱՆ

— «Մեկ Ոճ»ին պակասը

ԽՍԱՀԱԿ ՎՈՐԴԱՊԵՏ

261

ԲՈՆԱՍՏԵՂՇԱԿԱՆ

- Մայրավանքի տանիքներէն ...
- Առեղծուած
- Պարտեալ իշխանն
- Հնձուորներ
- * *

ԱՇՏԻՇԱՏ

265

»

266

ԱՆԵԼ

266

ՌՈԶՈ. ՊԵՏՐՈՍԻԱՆ

267

ՅՈՒՆ. ՇԻՐՈՅ

267

ԳՐԱԿԱՆ

— Մրգունի Տիւսաբ

Յ. ՕՇԱԿԱՆ

268

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ

— Պապ Առօսկունի

ՀՐԱՆԴ. Ք. ԱՐՄԵՆ

272

ԵՐԱՋՏԱԳԻՏԱԿԱՆ

— Միջնադարեան հայ կոմպոզիտորներ

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

277

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

— (ԽԵԼ) Ցովիաննես Թլկուրանցի

Ն. ԵՊՈ. ՇՈՎԱԿԱՆ

281

Նահան Ռ. Պեղպերեան

ԽՄԲ.

286

Կեանիքիս բաւխումը

ՇԱՀԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

287

Երուսաղեմի տագնապը լուծման համբու մեջ

289

Տեղեկագիր Ս. Արոռոյ Նուիրակութեան յԱմերիկա

ԿԻՒԲԵԴ. ՎՐԴ. ԳԱԲԻԿԵԱՆ

303

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՄԵՆ

- Հեռազիրներ
- Եկեղեցական - Բեմական
- Պատօնական
- Վերադարձ Ս. Արոռոյ Նուիրակին
- Պատօններու փոփոխութիւններ

313

313

314

316

316

Տիրուինի

— Հանգիս Գեր. Տ. Պարզեւ Սպո. Վերանեսեանի

317

تصدرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النافلة الاستاذ هايكازون ابراهيميان

العدد ١٠ - ١١

طبع في مطبعة دير الارمن - القدس

اكتوبر - نوفمبر ١٩٥٦

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

≡ Ս Ի Ռ Ա Ն ≡

Լ. Տ Ա Ր Ե — Ն Ո Ր Շ Բ Ա Ն

1956

Հ Ա Կ Տ Վ Ա Ր Ե Մ

Թ Ի Ւ 10 - 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

“ՆԱԽԱՆՉ ՏԱՆ ՔՈ ԿԵՐԻՑԵ ԶԻՍ”

Անցնող քանի մը շաբաթներու ընթացքին, երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնն ու Հայ ժողովութեղը առ հասարակ տոգորուեցան նախանձայուղութեան ողիով մը ընդդէմ ազգային խղճմտանքը խոցոտող տղեղ արարքի մը ու անոր հեղինակին:

Այդ անորակելի արարքն էր վրդովիչ զրպարտազրի մը տրուիլը Յորդանանի կառավարութեան՝ Ա. Աթոռիս նախկին Տեղապահ Եղիշէ Արքեպո. Տէրտէրեանի կողմէ, ի մասին Միաբանութեանս աւաղ անդամ Տ. Տիրան Արքեպո. Ներսոյեանի: Երբէ հետեանք այս զրպարտազրին, Տ. Տիրան Արքեպովու հեռացուեցաւ իր հոգեոր Տունէն, հակառակ թափուած ջանքերու և ժամանակաւոր յաջողութեան՝ զինք երուսաղէմ պահելու: Ա. Աթոռոյ վարչական գեկը իր ձեռքին մէջ պահող անձին կողմէ սարքուած այս սադրանքով երբ Միաբանութեանս ամենէն բանիքուն, զիտակից և Աթոռանուէր անդամը վանքէն բռնի կը հեռացուէր, նախ հնթական կը զրկուէր, իրակ Միաբան Սրբոց Յակոբեանց Ալխուսին, երուսաղէմ մնալու իր անկառակելի իրաւունքէն, և ապա կը սահեղծուէր գտանդաւոր և աղիտաւոր նախընթաց մը որ կանդ պիտի չառնէր Տ. Տիրան Արքեպիսկոպոսի հեռացումովը միայն:

Այս տնաքանդ մտայնութիւնը խոռվեց առողջ մնացած հոգիները Միաբանութեան մեծամասնութեան; որոնք լեցուած՝ նախանձախնդրութեան ողիով լծուեցան Աստուծոյ ու Ազգին այս նուիրական Տունը մաքրազործելու աշխատանքին:

Նախանձախնդրութեան ողին այնքան կենսական է մարդկային ընկերութեան բարոյական առողջութեան համար սրբան սիրոյ առաքինութիւնը առողջութեան հոգեկան կատարելութեան համար: Նոր կտակարանը լեցուն է դրուագներով ուր Աստուծոյ արդարութիւնը պէտք կը զգայ միջամտել ազգու և ուժգին կերպով, մէջտեղին վերցնելու համար բարոյական կարդ մը խոչընդուներ որոնք արգելք կը հանդիսանան սիրոյ և սրբութեան օրէնքներու տիրակալութեան: Այս կարգէն է, օրինակ, չուանէ խարազանը զոր մեր Տէրը շինեց մաքրազործելու համար Աստուծոյ Տաճարը զոր ոմանք վերածէր էին «Աւաղակաց այր»ի:

Նախանձայուղութեան պոոթկում մըն է նաև Պողոս Առաքեալի խիստ դատաստանը հաւատաքի մէջ «Նաւակոծեալ» ներու մասին զորս, կ'ըսէ, «Մատնեցի Սատահայի, զի խրատեսցին չհայհոյել»:

Ուրեմն երբ սրբութիւններ կ'արհամարհուին ու կ'սունակոխուին, երբ հոգիներու զայթակոռութեան առիթներ կը տրուին ու երբ ճշմարտութեանց դէմ աքացումներ տեղի կ'ունենան, ասպարէզը պէտք է մնայ նախանձայու գութեան ողիին հրապարակը մաքրելու համար:

Վանքեր Աստուծոյ տուներ են: Անոնք սահմանուած են ըլլալու աղօ, թանուէր կեանքի, կրօնական կարդապահական կենցաղի և մտաւորական ու առանին աշխատանքի խաղաղ վայրեր: Ասոնց վրայ եթէ աւելնայ նաև կրթութեան վառարան մը ըլլալու առաւելութիւնը վանական հաստատութիւնը կը մօմենայ իր կատարելազոյն տիպարին: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց դարաւոր վանքը վերհեւի նպատակներուն ծառայելով հանգերձ ունի բնորոշիչ ու բիշ նպատակ մը որ յատուկ է իրեն միայն, այսինքն պահպանութիւն Ցեօրփական Սրբավայրերու:

Երբ վանք մը շեղի իրեն համար նախասահմանեալ նպատակներէն, բայց կը դառնայ բարոյական ներքին վատասերման որ իրաց բնական ընթացքով կը յանդի հոգեկան և իմացտկան կեանքի քայքայման և կազմալուծման: Նման աղիտաւոր ծամբու մը վրայ դրուեցաւ, դժբախտաբար, Սրբոց Յակոբեան վանքը անցնող վեց եօթը տարիներու ընթացքին:

Այս անձը որ կանչուեցաւ Տեղապահական պաշտօնին, 1949ին, երջանկայիշատակ Տ. Կիւրեղ պատրիարքի վախճանումէն յետոյ, դժբախտաբար չկատարեց Տեղապահնէ մը պահանջուած զրեթէ միակ պարտականութիւնը, որ է իր պաշտօնի անցնելէն 40 օրեր վերջ ընթացք տալ նոր պատրիարքի ընտրութեան զործողութեանց: Աններելի միջոցներով և անարդարանալի պատրուակներով Աթոռը սուզի մէջ պահեց ամրող եօթը տարիներ: Հակառակ վանական ներքին կանոնի, Տեղապահական ժամանակաւոր պաշտօնը զրեթէ մնայուն պաշտօնի վերածելէ վերջ ալ՝ ծանրօրէն թերացաւ վանական և պատրիարքական հաստատութեան մը զիմաստորի իր պատասխանատուութեան մէջ: Առ երեւոյթս այնպէս ցոյց տրուեցաւ որ վանական զործերը և կենցաղը կը գտնուին պահանջուած բարձրութեան վրայ: Սակայն խիստ ցաւ է մեզ յայտնել իրականութիւնը որ բարոյական փառախ մը արդէն իսկ բոյն դրած էր վանքին զեկը իրենց ձեռքին մէջ պահող խաւերուն մէջ և կը սպառնար վարակել ամբողջ Հաստատութիւնը:

Քանքարներ, որոնք չէին պակսեր վանքին մէջ և որոնցմով օժտուած էր նոյնինքն նախկին Տեղապահը, թաղուեցան վատնումի վարչամակներու մէջ: Մարքի և հոգիի լոյսեր դրուեցան զայթակղութեան զրուաններու տակ: Վանքի կրթական և մշակութային մակարդակը զզալիօրէն իջաւ: Տնտեսականը զրեթէ քայքայուեցաւ: Եթէ այս բոլոր անշքացման մէջ կարևոր բաժին մը ունէր Արար-Հրեայ պատերազմը և անոր յաջորդող անորոշութեան շրջանը, սակայն պատասխանատուութեան մեծագոյն բաժինը կը մնայ դարձեալ նախկին Տեղապահին և իր համախոհներուն վրայ:

Սուրբ Տեղեր անշքացման խնամքի պակասէն և շատ բան տուժեցին կրօնական իրենց օգտակարութենէն: Ուխտաւորներ յաճախ վերապարձան Երուսաղէմէն՝ աղբիւր զացող և ծարաւ վերադարձող մարդոց հոգեվիճակով: Ոչ ոք որոնց հոգիին մէկ անկիւնը տակաւին վառ կը մնար Ս. Յակոբը միշտ իր պայ-

ծանծաղամտութեամբ ուզեցին որակել այս պայքարը : Պատահածը իր խորքին և էռթեան մէջ, Տիրոջ Տան նախանձով վառուած հոգիներու խաղաղ բայց ուժեղ բանկում մըն էր, ընդդէմ անսոնց՝ որոնք մենատիրական և գեղծարար դործունէութեամբ փորձած էին նուիրական այս Տունը վերածել ու Աւագակաց այլ քի:

Միաբանութեանս զրաբարտուած, զրկուած և հեռացուած երէց անդամի մը անունը կրնայ իրեւ դրօշակ զործածուիլ, ոսկայն այդ անունին և խորհրդանշանին ետին կեցող և զործող իրականութիւնը Աթոռանուէր այն անմեն Ազին է որ սեպհական եղած է գարերու ընթացքին Սրբոց Յակոբեանց Աւագակաց այլ Ազին զործած է երբեմն Պարոն-Տէր, Եղթայիկիր, Դուրեան կամ Գուշակեան մեծ անուններու և անձերու մէջ, որոնք այս Աթոռին տուած են նոր փայլ և նոր վերելք : Սակայն այդ Ազին աւելի յաճախ լուռ և անադմուկ զործած է համեստ, զրեթէ անանուն այն կարգաւոր և աշխատաւոր ընտիր Միաբաններուն մէջ, որոնց միակ իտէալը և փառքը եղած է Աստուծոյ և Ազգին այս պահածալի Տունը աղօթքի և աշխատանքի հաստատութիւն մը տեսնել . այս խանարհ հոգիները այդ իտէալի իրազործան համար զիշերներ կը լուսցնեն Լոյս Դիբեզմանին վրայ հանապազօրեայ հայ պատարագ մրմնչելով : Բնեթենէմի Յաւիտենական Աստղը կ'ողջունեն Եննդեան մթաստուեր Այրին մէջ ամեն. օրեայ հայ պաշտամունք կատարելով : «Վերջապէս այս նուիրեալ հոգիները և Արդարութեան Արեգակը » կը փառաբանեն Ա. Յակոբայ ազգային պարծանք Մայր Տաճարին մէջ առաւօտեան լոյսին հետ :

Այդ Ազիէն թելադրուած, արտասահման ծառայող պարտաճանաչ Միաբաններ, երբ իմացան որ Ա. Աթոռը ստիպողարար պէտք ունի իրենց ներկայութեան, համախմբուեցան Մայրավանք միանալու համար Ա. Քաղաքի մէջ զործող նոյնքան նախանձախնդիր Միաբանակից եղբայրներուն : Եւ միասնարար ուխտեցին Ա. Աթոռոյ վերելքի աստուածահաճոյ և ազգաշէն զործը լաւազոյն հանգրուանի մը հացնել :

«Նախանձ տան քո կերիցէ զիս»: Այս խօսքը եղած է և կը մնայ նշանաբաններէն մեծը Սրբոց Յակոբեանց զինուորեալ Աւիտին : Այս նշանաբանէն կ'առնեն իրենց թափը այն գէպքերը որ տեղի ունեցան վերջերս Երուսալէմի մէջ : Այս նշանաբանի լոյսին տակ դիտուած՝ այդ գէպքերը կ'առնեն նոր իմաստ և կը դառնան աւելի յստակ և բիւրեղացած մինչև իսկ բժուածած աչքերու :

Միաբանութիւնս ներկայիս ևս առաջնորդուելով Աթոռանուէր նախանձախնդրութեան այս յաւերժական Ազիէն, Տեղապահութենէ զարդեցուց՝ այդ պաշտօնը չարաշար և չարաշահօրէն զործածող տնձը և նոր Տեղապահ ընտրեց, Տ. Տիրան Արքեպիսկոպոսը :

Այժմ ճամբայ կ'ելլենք, ապաւինած Աստուծոյ օժանդակութեան և Ազգի համազործակցութեան, վերստին շէնցնելու, կրկին պայծառացնելու Տիրոջ Տունը և զայն գարեալ մատուցանելու Աստուծոյ փառքին և Ազգի ու Եկեղեցիի բարձրագոյն վայելքին :

ԿՐԹԱՎԱՐԱՐ

“ՄԵԿ ՈՉ”ԻՆ ՊԱԿԱՍԸ

(ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԼՈՅՍՈՎ)



Քիչ անգամ կ'անդրադառնանք մեր կեանքին մէջ գաղափարական այն իրականութեան որ է միուրին, խմանալի և տրամախոհական այն իրականութեան որ է դրուրին, բայց միշտ ալ կը տառապինք անոնց պակասէն։ Մեր հոգին կը գտնէ իր անգործութիւնը երբ միտքը կը խորհի իր հանգիստը գտնել. բայց մեր միտքը կը հանգչի միտին այն ատեն երբ՝ թէ իրմէ ներս՝ ու թէ իրմէ գուրս, գաղափարական խմանալի ու առարկայական չօշափելի իրականութիւնները հասկնայ ոչ թէ անջատ անջատ մասերէ և կամ տարրերէ կազմուած գեղ մը՝ այլ միութիւն մը, զրութիւն մը։ Ահա թէ ինչու մեր առօրեայ խօսակցութեան մէջ, յաճախ կը տառապինք ու սա հարցումը կ'ուզենք մեր խօսակցին միտքդ ի՞նչ է եղբայր։ Այս պարագային մենք մեր խօսակցին բառերուն մէջ ամբողջական միութիւն մը չենք տեսած մոռզվ, բառերը գեղ մը կը ներկայացնեն փոխանակ գրութիւն մը որով «բան» մը և «միակ բան» մը ուզուի հասկցնել։ Ասկէ կը չետեւի, հոնուր որ նպատակ չկայ զրութիւն չկայ։

Մեր տառապանքը մեծ համեմատութիւններու կը հասնի երբ մեզմէ ներս՝ անշօշափելի և մեզմէ գուրս՝ չօշափելի բազում մասեր կամ տարրեր պարունակող իրականութիւնները հասկնալ փորձենք։

Իմ և քու մտքին համար գիւրին է հասկնալ եւ այդ՝ մէկ ակնթարթի մէջ, պրիչ կամ «զիրք» չօշափելի իրականութիւնը։

Կը տառապիմ և կը տառապիս սակայն, երբ անշօշափելի գաղափարական իրականութիւն մը «բարի» և «չար», «տղեզ» և «գեղեցիկ» և կամ «անհատ» և «ազգ», «աշխարհ» և «տիեզերք» չօշափելի իրականութիւն մը փորձեմ կամ փորձես հասկնալ։ Առաջին իսկ վայրկեանէն, միտքը այսպիսի պարագայի մը, ինքզինք զինա-

թափ կը հռչակէ ու կը թողու որ երբեմն բնազդը բայց միշտ անմիջական գիտակցութիւնը զինք կառավարէ։ Նմանօրինակ իրականութեանց մասին երբ կը խօսին մարդկի ու մինք պատահի որ չկարենանք հատեւիլ անոնց խօսքերուն և մտածումներուն, կամ այն է որ կը թողունք և կը հեռանանք և կամ այն է որ կ'ընդմիջենք նիւթը փոխսելու դիտաւորութեամբ ու կ'ըսնք այսօր օդը շատ գեղեցիկ է, այնպէս չէ՞։

Բայնք անցողակի այս բաները որպէս զի չեշտենք կարեւորութիւնը և անհրաժեշտութիւնը այն իրողութեան ինչ որ պարզել փորձեցնեք քիչ մը մեր։

Արդ, երբ որ բառերը քով քովի գան և յօրինեն քերթուած մը, կամ երբ որ ձայները քով քովի գան և յօրինեն երաժշտական կտոր մը, գրուած կ'ըլլան Զե և կամ Ոճ, Եթէ պատահի որ Ոճի մը ենթակայ և միութեան մը մէջ առնուած (քերթուածին կամ երաժշտական կտորին) բառերը կամ ձայները յանկարծ չուզեն հպատակի և գուրս գան միութեան մէջէն, անհասկնալի բան մը յառաջ կուգայ, այդպէս ալ կեանքի մէջ։ Անհատը՝ որ նիւթի, մտքի և հոգիի ամբողջութիւն մըն է, անհասկնալի բան մը կը գտնայ, երբ կորոնցնէ ինքլինք, իր որոշադրած նպատակը իրագործելու ընթացքին, յանկարծ ապրի օր մը նիւթին համար, օր մը հաճոյքին, ուրիշ օր մը գաղափարի մը համար և այսպէս շարունակաբար։

Ազգերն ալ սակայն, անհատներու պէս կը ներկայացնեն ամբողջութիւն մը։ Պատմութեան մէջ իւրաքանչիւր ազգ ունեցած է իր գարաշընները։

Տարակայս չկայ որ պատմական ամէն գարաշընն (έροος) բոլոր ազգերու մէջ ունեցած է իր որոշ Ոճը։ ունեցած է այն ընդհանուր Զել որուն ներքեւ տիրակալուած են կեանքի զրեթէ բալոր մակարդակները և կամ սապարէզները։ Այլ խօսքով, մարդկային քաղաքակրթութեան անցեալ մէկ ընծանին, կեանքը ըմբռնելու և ապրելու որոշ միութիւն և զրութիւն մը եղած է։ Եղած է ըրջան մը երբ մարդիկ կեանքը կ'ըմբռնէին գաղափարապաշտական զրու-

թեան մը մէջ, ու արուեստները, բարոյականը, կրօնքը, քաղաքական ուղեգիծը, իմաստասիրութիւնը, իրենց վրայ առած էին դադափարապաշտական դրոշմը. ու այս գըոշմը իջած էր մինչև ընտանեկան յարկաբաժինը, կենցալազիտութիւնը ու մինչ անհատ:

Եղած է ուրիշ դարաշրջան մը ուր մարդիկ կնքուած են գաղափարական դրւթեամբ: Հերոսներ պատելու, հերոսներ ներբովելու, հերոսներ նկարելու, երգելու և տուներու մէջ հերոսներու մասին յանախ խօսելու:

Թերես մը դարաշրջանը կարենանք կոչել զգայարանապաշտական կամ զոյացապաշտական և բաւական մըն ալ ոքիչ մը տոկէ քիչ մը անկէ ոի դարաշրջան:


Այս իրողութիւնը բաւ կ'ըլլար հաստատել եթէ անդամ մը մարդ այցելութեան երթար մասնաւորաբար Միացեալ նահանգներու նոր աշխարհը:

Բանը՝ որ մարմին եղաւ և բնակեցաւ մեր մէջ: Աւեայն տեղը չէր որ Համաշխարհային եկեղեցիներու Համաժողովին մէջ մեր գարու լուրջ և մեծ մտածողները խորիմանալով և ներդգալով ստագնապը մեր զարունա բանաձեցին «Քրիստու և յոյր աւարձի» «Christ is the hope of the world».

Ոճը այն է պատմութեան մէջ, ինչ որ է նկարագիրը անհատին մէջ: Անգամ մը որ Ոճը ստեղծուի թէ՛ անհատին և թէ զարաշրջանի մը համար, դարաշրջանն ու անհատը կը ստանան անոր կնիքը:

Եթէ բոլոր ազգերը ունեցած են իրենց Ոճերը գանազան շրջաններու, հայ ժողովուրդն ալ, անշուշտ, ունեցած է զայն:

Մեր ազգային և եկեղեցական պատմութեան մէջ յատկապէս եւ դարձ եղաւ այն դարաշրջանը ուր որու կերպով զբանըւեցաւ, կեանքը իր բոլոր երեսներով ապրելու և ըմբռնելու Հայկական մՄէկ



Կեանքը առնելու և մեկնելու դրւթեան մը մէջն ենք ուր զրեթէ ամէն օր կը լսենք և արդիականութիւնն, սաշնարհը փոխուած էն, սնորութիւն պէտք էն բացարութիւնները, որոնք ոչ միայն կը քամն ըսողին այլ նաև լսողին ալ միտքը և հոգին:

Զկայ, կը խորհիմ, Զել, Ոճը և աՄէկ Ոճը որով կեանքը մեկնուէր, իր բոլոր երեսներով:

Երբ Ոճո կ'ըսեմ և կամ ո Զել, ակ'ըմբռնեմ բան մը որուն ձեւը և կամ ոճը կայ: Ի՞նչ պէտք է ըլլայ այդ բանը:

Իմ մտածումովս ու հաստատ համոզումովս պէտք է ըլլայ այդ պանը՝ Մարգեղացած Աստուածը պատմութեան մէջ:

Ոճը: Հայ հաւաքական ընդհանուր զիտակցութիւնը գրուեցաւ զրութեան մը մէջ. մեկ Զել և մէկ Ոճը կնիքը ստացաւ: Ու եթէ հայ կեանքին զետը կը հոսէր, արուեստի, կրօնքի, բարոյականի, քաղաքական ուղեգիծի զանազան գետակներու մէջէն, բայց հոն՝ ուր կը հոսէին անոնք, ա՛շնուցան և ուղղուեցան տարբեր ուղղութեամբ: Վերին աստիճանի կարենոր է նպասակը. վասնզի նպատակն է որ վերիկալլ կը ըրչէ զրութիւն մը, կը յեղաշրջէ նկարագիր մը՝ որոնցմէ պայմանաւորուած են մեր հաւաքական գժրախտութիւնն ու հաւաքական երջանկութիւնը:

Եւ դարուն մէջ կատարուած յեղաշրջը ջումը պատճառ եղաւ հայ հաւաքականու-

թեան երջանկութեան։ Այդ յեղաշըջման կորիցք եղան Աստուածաշունչ մատեանին հայերէնի թարգմանութիւնը և հայ գրերու գիւտը։

Մրաւամբ մեր Ասկեդարեան Ոճը կոչած ենք Ասհակ-Մեսրոպեան Ոն, քանի որ այս երկու քը գլխաւորաբար եղան նոր Զերն ստեղծման զսպանակները ու գլխաւորեցին այդ յեղաշըջումը։ Ու անգամ մը որ գրանքնեցաւ Ոճը, և «Մէկ Ոճը», հայ գրականութիւնը, հայ արուեստը, հայ բարոյականը, հայ կրօնքը, հայ քաղաքական ուղղափիծը, ու ամէն ինչ որ հայ էր, ինքնզիքը գտաւ դէպի մէկ ուղղութիւն թուիչքի մը մէջ։ Ասհակ-Մեսրոպեան Ոճին յատկանիշները տոկունութիւնն, պարզութիւնն, մարդկային, սրտառուչ, զուսպ և չնորհալի, վեր և վեհուացիկ, յայտնուած կը տեսնինք հայ ճարտարապետութեան մէջ, մանրանկարչութեան մէջ, շարականներուն մէջ վերջապէս, ամէն ինչ որ հայ կեանքը կը չինչ Ասհակ-Մեսրոպի նկարագրին համաձայն է։

Մարդեղացած Անել Բանին Ներկայութիւնը թարգմանչաց ստեղծած «Մէկ Ոճին էւոթիւնն է» Մէնք խորապէս քրիստոնեայ ժողովուրդ ենք։ Մեր հայրենասիրական զգացումն ալ եղած է խորապէս քրիստոնէական։ Վկայ՝ Վարդանանցը։ Մեր ժողովուրդը չէ կրցած առօրեայ կեանքն իսկ ըմբռանել առանց Յիսուսի Քրիստոսի։

Թարգմանչաց մատենագրութեան էջերը անգամ մը որ թղթատենք, բաւ կ'ըլլայ մեզի համար հասնիլ այս հաստատ եղբակացութեան։

Ճանաւած վասն Քրիստոսի տկարանամ, յայնժամ զօրացեալ լինիմ։

Ակաւ ևս լիցի պարծել տկարութեամբու, զի ընակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի։ Առաքելական այս ոգիէն տիրապետուած եղան ոչ միայն մեր մատաւրականները և հոգեորականները, այլ նաև քաղաքական և հանրային գործիչներն ալ, հարուստն ու աղքատն ալ։

Այս ոգիէն ներշնչուած հայ գիւղացին ամէն առաւօտ պիտի երգէր «Օքնեալ» է Աստուած, յիշեալ է Աստուած։ հօ՛, հօ՛, հօլարա եզօ ջան»։

Մարդեղացած Աստուծոյ Շունչը և ներհը ծաւալած կը գտնենք մեր ժողո-

վուրդին ամբողջութեանը պատառին վրայ։ Բայց մեր սփի՞ւռքը։

Մեր սփիւռքը կը տառապի այսօր «Մէկ Ոճին ապակասէն։ Եթէ հատորներ կարելի էր լեցնել հասնելու համար այն եղբակացութեան թէ» թարգմանչաց սերունդը գտած էր իր հանգիստը ինքզինքը իրագործելու միակ Ոճի մը ճամբարյէն, նոյնը կարելի է ընել հասնելու համար այն եղբակացութեան որ մեր սերունդը ինքզինքը իրագործելու համար փիտուսուի մէջ է «Մէկ Ոճին մը երջանկարեր ներկայութեան։ Պէտք է վերըստին գտնենք մեր կորոնցուցածը, որպէսզի կրօնաւորը, արուեստագէտը, գրողը, գիտունը և հայ հաւաքականութիւնը ըլլայ Մէկ Դրութեան ենթակայ ամբողջութիւն մը։ Մեր ներշնչման միակ ազդիւրը պէտք է ըլլայ Աւետարանը և Հայաստանեաց Նիկեղօցին։ Պէտք չէ որ մեզի ըսեն։ «Միտքդինչ է, հայ ժողովուրդ»։

«Միասնականութիւն» բացատրութիւնը և բացականչութիւնը կրնայ թերես հայ հոգիները յուզել այսօր։ Բայց, բառին սուուգաբանական իմաստը ի՞նչ է, «Միասին ըլլալութի՞ւն»։ Կրնա՞նք միասին չըլլալ սակայն։ Լսել ուզուածը, ուրեմն, միուրիւն է փախանակ Միասնականութեան։ Այն միուրիւնը որուն քիչ անգամ կ'անդրագառնանք մեր կեանքին մէջ ինչպէս քիչ անգամ կ'անդրագառնանք այն միւս իմանլի և տրամախոնական իրականութեան որ է դրութիւն։

Բարեկամ սիրելի ։ ի՞նչ կը խորհիս թէ պէտք է խորհինք մենք իրեմ հայ հաւաքականութիւն։ Բան մը սակայն որ մի և նոյնը ըլլայ ամենուս համար։ Բանի որ մի և նոյնը խօսելով ու գուծագրելով է որ կրնանք երաշխաւորել ամիութեան» և «զրութեան» իրագործումը։

Սփիւռքի մեր հայ ազգային և եկեղեցական իրականութեան մէջ շատ շատ են ամիութիւնները։

Անոյնոր ճամբաները Հոռմ կը տանինք կ'ըսենք յաճախ մխիթարելով մենք զմեզ, բայց ի՞նչպէս բոլոր ճամբաները Հոռմ տանին երը և Հոռմօվ ինքը չկայ։

Մեր հոգեոր, իմացական, բարոյական ու գեղագիտական Հոռմը պէտք է թարգմանչաց սերունդի իրագործած և Անեղ Բանային Հոռմը ըլլայ։ Այն կեղրոնը՝ որուն

պէտք է ուղղուին հայ ժօղովուրդը միաւ ևրոպ ամբողջութեան բոլոր զիծերը։ Այն մայրաքաղաքը՝ ուր բոլորս ալ պէտք է վճռենք մեկնիլ։ Պէտք է սեպհականացնենք զանձերու Գանձը։ Այս շարժումով մենք գտած կ'ըլլանք մարգկային ամենէն կենաւական ապրումք։

Մարդիկ ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր կը խորհրին երջանկուրեան մասին։ Ի՞նչպէս ընենք, ի՞նչ ընենք որպէսովի երջանիկ ըլլանք։ Կը տառապինք երջանկութեան համար։

Եշխարհի քաղաքակրթութեան պատմութեան մէջ ոչ մէկ ամտածում մի միութիւն և իմաստասիրական դրութիւն կրցած է յաւիտենական և ճշմարի՛տ երջանկութիւնը տալ մարդոց։ Պիւթակորասէն սկըսեալ մինչև Պէրկառն, մինչև մեր օրերու մտքի առաջնորդները։

Կապէս երջանկութիւն չկայ, անշուշտ, այլ երջանիկ եղողներ կան. ինչպէս զեղեցկութիւն չկայ, այլ զեղեցիկ առարկաներ կան. կամ քրիստոնէկութիւն չկայ, այլ Քրիստոս և քրիստոնեաներ կան։

Մըգ, երբ հայ արուեստագէտը, հայ կրօնաւորը, հայ քաղաքագէտը, հայ բարոյագէտը, զիտունը, ընտանիքը և անհատը ինքզինքը կը զդինքը կը զդայ տիբապիտուած Քրիստոսի Անձին մեայուն ներկայութեամբը իր ներաշխարհին մէջ, ինչպէս էր պարագան Ե. գարուն, անպայման կ'ունենայ մտքի և հոգիի վերին և վերջնական տատիճանի հանգիստ և զննացում, և կը յայտարարէ թէ ինք երջանիկ է. կեանքի մէջ ամէն ինչ որոշ իմաստ մը կ'առնէ, ծնունդէն մինչև մահ ու անդրանցնելով այս վերջին իրականութիւնն ալ կրնայ ըսել թէ կ'երթամ յանձնուիլ մահուան, Անմահութեան տառաօտը և յաւիտենականութիւնը ողջունելու համար։ Աղջունելու յաւերժական Հռոմը Աստուծոյ Արքայութեան։

Մէր ազգային գիտակցութեան մէջ, մէր տառապանքներուն էն ահաւորը մերժումն է Քրիստոսի Անձը նկատել իրեւ գերազոյն իրագործելի նպատակ, իրեւ ներշնչումի միակ Աղքիւր։

Հաւատալ Աստուծոյ, հաւատալ Քրիստոսի էապէս կը նշանակէ ընդունիլ Անոր գոյութիւնը, բոլոր անհաւատաները էապէս կը մերժեն Անոր գոյութիւնը։ Յոյսը տակա-

ւին իրագործելիին ակնկալութիւնն է, Աեր ակնկալուածին և ընդունուածին իրար հանդիպման, բաղխումի՛ իմացական և հագեկան իրազութիւնն է։ Այս հանդիպումն ծագկող զգացումը այնքան լի և ամբողջական բերկրանք մըն է որքան լի է և ամբողջական իրագործուած նպատակը։

Կը հաւատամ թէ կրնանք մենք ևս, հակառակ որ ժամանակով և միջոցով երկար հեռաւորութեան մը մէջ գանուինք Թարգմանչաց սերունդէն, հաւատալ, յուսալ և սիրել զՔրիստոս։ Սահակ, Մերոզ, Եղիշէ, Մովսէս Քերթոզ, Դաւիթ Անդաղ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի հայ երջանիկ այդ առւրոք հոգիները հայ հաւաքական գիտակցութիւնը շաղեցին հայ կեանքը իր բոլոր երեաներով ըմբռնելու, արտայայտելու և ապրելու Մէկ Ոճի միութեան և զրութեան մէջ։ Մէկ Ոճը որ զերազանցագէտ համարի համար և Միուն գտանկ սպասնացող յաճախ կրկնուած սա մտածումները և արդիական և գիտական գարու մէջ կ'ապրինք. պէտք է ազգ և եկեղեցին բարեկարգենք, պատշաճեցնելով մեզի, մէր դարուն։

Ո՞ր արուեստագէտ նկարիչը, կամ երաժիշտը կամ քանդակագործը ինքինքը պատշաճեցուցած է նիւթին։ Ո՞ր արձանէ, կամ ձայնն է կամ խօսքը որ համարձակած ըլլայ զլուխ բարձրացնել արուեստագէտին դէմ։

Մայքը Անձելի հանճարին հարուածներուն ներք մարմարը պիտի մաշէր, հաւէր, տառապէ՛ր որպէսովի Մովսէսի արձաններ ըլլար։

Եթէ թոյլ արուի ինձի, ես ի բոլոր սրտէ կ'աղօթեմ որ հայ ամբողջութիւնը յանձնուի Քրիստոս-Արուեստագէտին որպէսովի Անոր Աստուծային Յաւերժ Շնորհին և Անոր ներք մենք երիւնք, ներկայ մեր ազգային և եկեղեցական պատշաճեան մէջ, որպէս Մէկ Ոճի իրազում։

ԽՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՂԵՑ

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՏԱՆԻՖՆԵՐԵՆ...

ԹԻՐՈՒ ՄՐԹԱՉԱՌԻ

Լուսինն կապոյ, արծաք բըմայք
Կը ցնցուղէ:

Մովարու ցուրտ լեռներէն
Մինչեւ կատարը Զիրենեաց...
Գերսեմանի, Չորե Կեդրոնի,
Քաղաքն ամբողջ
Արբայազարմ Մարզարէին
Վարշամակուած կրակմարէն
Իր դարաւոր մեղերէն կարծես
Լուս կը համրէ:

Աւ լրութիւնն
Խնչպէս եփուած «այսօ»ուան հաց,
Սուրբ Քաղաքի բընակիչներն
Հերզգինքէ կը մարտեն:

«Ծովը Մեռեալ» չարագոււա՞կ
Իր մաղձին մէջ անդրներուած
Խնդիրներին վրայ յար խորտակուած
Իր ամրութիւնն կ'եղերեզէ...:

Չարն ու բարին, զիւերին մէջ
Կըլլան եղբայր ու կը ննջեն
Դէմովլ անմեղ, ինչպէս մահուան
Օրորդին զեղեցկացած
Պիտի ննջեն յաւերժօրէն...:

Տաճարը նին Ենուվայի,
Իր փառքին մէջ այրիացած,
Լուսնիայի ըողերուն տակ,
Կ'ողբայ յոււերն իրմէ մէկնած...:
Յանկարծ սակայն կ'արձանանայ
Լումայափոխ սեղաններու
Թաւալզլոր կործանումին...:

Լուսինն ինչո՞ւ
Իր բըմայքին մէջ ամօրխած,
Աչ կը դառնայ արձագանգին
Որ կ'ալիքուի զմբէքներէն Գողգորայի.

«Սյսման չարիք, այսման խաւար,
Իմ զաւկըներ ի՞նչպէս կրցեր
Են հաւաքել
Մեղերու պէս, վերերու պէս,
Իրենց որտին,
Առոնց համար Սիրըս սրի...»:

Բայց լրութիւնն ներզինքէ:
Կը ծանրանայ կապարի՝ պէս
Մայրավանիք գմբէքին վրայ,
Նոնիներուն, տանիներուն.
Աւ լուսընկան՝ անմեռ վըկան
Պատմութեան մեծ հոգիներուն
Մայրավանիք Սուրբ Սեղանին
Պատարագիչ...:

Կուգան հիմա շարան շարան
Ես կը տեսնեմ մածումի իմ աչերով,
Բոլո՞ր անոնիք որոնի մեռա՞ն
Մայրավանիք բարւոյն համար,
Առոնի արի՞ւն ու զաղափա՞ր
Տըւին լուման իրենց վերջին...:
Աւ հոգիներն «Հացըն Կենաց»
Երբ ըրբներուն իրենց առին
Սյդպէս ինչո՞ւ
Գլուխը կախած իրեւ ըստու
Մայրավանիք տանիներէն
Ո.նձայն անոնիք բաժնուեցան...:

Լուսինն կապոյ, արծաք բըմայք
Կը ցնցուղէ...
«Ծովը Մեռեալ» իր ամլութիւնն
Կ'եղերերզէ...:

• • • • •
Լուսինն մեռե՞ր՝ Ծովուն գրկին.
Լոյսի նշանը Մայրավանիք
Սուրբ Սկինէն կ'արշալուսուի...:

Ո. ՇՏԻՇ Ո. Տ

Ա Ր Ե Ջ Ծ Ո Ւ Ա Ծ

Երէ Աստուած իմ, չեր, չեր կրնար մարդուն մէջ,
Դընել հոգի մը ազնիւ ու զալտօրէն հոն ցանել
Ամենասեղծ բու աշովդ, վերամբարձով հունս ։ իրոյ,

Որ հակառակ դիպուածին ու հակառակ աշխարհի
Հանոյթներուն ցեցիանզոյն, կարենար ան վերանա՛լ
Ու հասուննա՛լ զալտնաբար, բովէներուն հըպելէն,

Հետրզինետէ ամրացած, ինիզինին մէջ ապահով,
(Հասակն ինչպէս նոնիին), զտնե՛լ, տեսնե՛լ, ուսափե՛լ,
Բմպե՛լ սպին հոգւոյն ի՛ր, մէջ Սպիիդ բո՛ւ Հոգւոյն,

Ինչո՞ւ ուրեմըն զբրիր, Պատկերիդ գրումը ու շունչ,
Որ ան այսպէս եղծանէր, զանոնք բերէր հաւասար
Հոդին, զետնի՛ն երկրամարտ. ու վիրաւոր իր մժելն,

Ու իր սրտե՞ն զարնըւած, երբար զտնել մուր դամբանն...:

Ա Շ Տ Ի Շ Ո Տ

Պ Ա Ր Ե Ջ Ե Ա Լ Խ Ե Խ Ա Ն Ը

Դաւսին վըրայ վերջապէս, սրբազան մուրը կ'իջնէ:
Ինչպէս մեռելը դանդաղ՝ իր փոսին մէջ հանգիստի.
Ճնողդ եւ սէզ լուրիթեան անհուն խորհուրդը սրտին՝
Կը նայի ես օրերուն, պարտեալ իշխանը տրում:

Կան՝ զոներուն իր անրին ցուրտ մարմինները անրադ.
Եւ իր եսին անաւոր զեղեցկութիւնն ու նանկն ալ.
Խիզախ լեզուին հարուածով բացուած վերերն անխաղաղ,
Կ'արիւնին դեռ անէծի շեշերուն մէջ լոկեայն:

Լուրած նիմա, եւ նոյնիսկ՝ սիրելիին իր անմահ.
Վրան նիւանդ իր խոնին երկարը ծանր մեղերուն,
Եւ մածման ամպերն ալ պատած երկինքը յոյսին:

Պիտի մնան, այդպէս հոն, ծերութեան մէջ իսկ անխոնչ
Վըրէժխնդիր դէմքերն այս. դառըն՝ իշխանը պարտեալ,
Մինչեւ որ մուրը պատէ դաւսին հետ միտքը փարքամ:

Ա Ն Ե Լ.

ՀԱՅՐԴՆԱԿԱՆԿՐ

Հ Ն Զ Ո Ւ Ո Ր Ն Ե Ր

Հորիզոնից մինչ հորիզոն ծովի նըման արտը ոսկի,
Ալիքը ում է արեւի տակ մէկ հեղանազ, մէկ փոթորկուն,
Ու կարծես թէ հրդինը ում է հուր շողերից արեգակի,
Բայց ծփում է, տատանելում է, հուրհուրում է՝ մի բըռնկւում:

Գերանդիներն են շողշողում արեւի տակ իբր ասուպներ,
Ու զալիս են հնձուորները կանգնում ահա արտի եղբին,
Նրանց առջեւ քիստիքը բոց, հասկերն ինչպէս վառուող ջաներ
Տատանելում են, հուրհուրում են, զարնւում են լայն կրծքերին:

Գերանդիներն են շառաչում, հասկերն են լուռ փուլում լաս-լաս,
Աղջիկներն են փոցխում զուարթ, խործեր կապում արեւակէզ,
Քրտինքը թուխ ճակատներին փայլիլում է ինչպէս ալմաս,
Եւ հնձում են, եւ փոցխում են, եւ հալում է արտը կարծես:

Դղբդում է կոմբայնն հեռւում հորիզոնի վըրայ զեղին,
Ու ժպտում է, նայում արտին, այն թուխ տղան մեքենավար,
Միրոյ բնրուշ երգը խառնած իր զործիքի դղբդիւնին,
Նա երգում է, նա հնձում է իր գէմ փռուած արտը վարար:

Արեւն հանդարտ թեքւում է ցած, ժպտում յոզնած հնձուորներին,
Որոնց հումկու, լայն ուսերին զերանդիներն են շողշողում,
Հնձած արտի խոզանները թողած հեռւում ոսկեղնղին,
Յոզնած քայլում, շտապում են, նրանք արդէն դառնում են տուն:

Գիւղը հնեւուում իրիկնային մշուշի մէջ ծայնով անուշ,
Կարօտ մօր պէս աչքը ճամբին նրանց արդէն կանչում է տուն,
Եւ իջնում է արեգակի ցոլքերի հետ ոսկեմշուշ,
Հորիզոնից մինչ հորիզոն խաղաղութիւն, խաղաղութիւն:

ԱՌՋԱ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

* * *

Մայր իմ, մի մազդ էլ սպիտակելիիս՝
Իմ սրտի բոլոր լարերն են լալիս:

Թէեւ որդի չես կռվում կորցըրել,
Բայց կորածներն են զլխիդ ծիւն դրել:

Աշխարհից ուրիշ ոչինչ չեմ ուզում՝
Նոր ծիւն չդնի մազերին բո ծիւն:


ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ

ԴՐԱԿԱՆ

ՍՐԲՈՒՅՔԻ ՏԻՒՄԱՐ^(*)

Մ Ա Յ Ե Ց Ա

•



ՆԱԽԵՆԱՎՆ իսկ levantin այս կինը մարդ էր վարձուի վայրկեան մը նոյնացընել հեղինակուհին և հնթարկել անոր մէջ ինքնակինսագրութեան տարբեր բան մը որ պէտք չէ զարմացնէ մեզ, քանի որ մարդոց տառջին վէտերը իրենց անձնաւորութեան արտացոլութերն են արուեստի գործին վրայ: Իրաւ վիպասան մը Տիկին Տիւսարի ապրութերուն որոշ ըրջանէն կարող էր առնուազն նկարագիր խատացնող խոչոր վկայութիւններ սեենել: Խոսեցաւ իր ծնունդէն, անզրանիկ պարմանութենէն և այն ազդեցութիւններէն որոնք կանխոզ գարու կէսարուն հարուստ ընտանիքի մը հոգեխառնութիւնը կը յօրինէին, եւրոպական բարքեր, levantin հոգերանութիւն, լայն չափով սնապարձութիւն, գրամ, վայելք, հաճոյքներ և այն մասնաւոր երանքը կը թութիւն որ այդ օրերուն պարտազիր էր աւագ տուներէն ներս. — ատիկա մասնաւոր զառատաներով տունին մէջ զաւակներու կրթութիւնն էր: Ըսէք՝ կանոնաւոր դպրոցներու պակաս, ըսէք՝ սնափառութիւն, ըսէք՝ եւրոպան կապկելու թեթեռութիւն: Իրողութիւնը իրողութիւն է և հասարակաց՝ այդ ժամանակուան բոլոր մեծահարուստ տուներուն: 1830ին աւելի հետաքրքրական երեսոյթներ արձանագրուած կը գտնենք երբ կ'ուսումնասիրենք կեանքերը Զարթօնքի սերունդին բոլոր զերակատարներուն. պատուելիներուն զարաւրջանն է: Միւնոյն ժամանակ ըրջանն է ուսումնածարաւ թափառութերու: Գիտենք միայն որ Տիկին Տիւսար տունին մէջ մասնաւոր զասերով տիրապետած էր ֆրանսերէնի: Գիտենք զարձեալ որ խորունկ արհամարհանք ունէր մայրենի լեզուին հան-

գէպ. ու կը դարմանանք սա իրազութեան վրայ երբ զիտենք մանաւանդ որ իր ճայլը ազգային կրթութեան համար աշխատազ աւագորեար կիներուն մէջ բացարձակ աշխատող մըն էր: Բախտին հեղինանքովը կիներու հայրենանուէր ընկերութեանց մեծ և անդրանիկ սա հիմնադրուհին զաւակը իր ամենէն ընկալուչ տարիները ըլլայ անցուցած հմայքին մէջը օտարուոփ ազգեցութեանց: Մշտ- վէպին մէջ հերոսուհին տիպարը երբ զամանակակաց կեցուածքը քէն: Քաղաքիք չէ որ հրապարակը գուշակեց վէպին տկարութիւնը, բայց մեծաշողիք փառարանեց (և ասիկա՝ նոյնինուկ զատապարտութեան ձերն տակ, ինչպէս Զօհրապինն է) վէպը հիւսող, պաշտպանող, պարտազող զաղափարներու systèmeը: Ըսի թէ ինչո՞ւ ատանկ գրութիւն մը հիմնովին կեղծ էր ու փոխառիկ: Այդ իսկ պատճառաւ Մայորի տիպարին ծանրութիւն մը ճարելու համար ես կը մնամ զուրկ որեւէ նպաստէ, զիրքէն ինչպէս հեղինակէն: Դժուար էր նոն Օր. Այրուհի Վահաննեանը տեսնել: Խոյնքան զժուար՝ 1860ին մեծ միտքին, զաղափարազրութեան, ապրութերուն արձագանքները առնել: Ամրող չատարանութիւնը (Տիկին Սիրա ստեղծուած է արդ շատարանութիւնը կիսելու. այլապէս ոչ մէկ պատճառ՝ իր գոյութեան, այնպէս որ հարկ չէմ տեսներ իր տիպարը առանձին նկատողութիւններու: Մայտան փոխազըրուած է Ազրիականնեան կզզի մը, քիչիկ մը արևադարձային բնութեան մը տարտամ նկարազրութիւնները շահագործելու ի հաշիւ վէպին) այդ Մայորի, որ հիացում ազդեց եղիաններու, Պէրպէրեաններու, հասարակ տեղիքներ են կանխոզ դարու կէսերուն լրազրական զէզերուն: Աչ մէկ իրաւունք՝ մեր մէջ անոնց նորութիւնները արժեուի փորձելու: Աչ մէկ իրաւունք՝ մեր միջավայրին մէջ անոնց ընտելացումովը յառաջ զալիք բարիքին վրայ շահարկելու: Այնպէս որ բարքերէն, մտածութերէն աղքատիկ այս կինը երբ ուզենք տեսնել ըստ իսկ իր գերին մէջ, այսինքն վէպի մը հերոսուհի ըլլալու պայմաններուն մէջ, այն բակայութիւնը պէտք է, այնքան անըն-

(*) Հատուած՝ Յ. Օւականի նոր լոյս տեսած Համապատեմ Արեւմասահայ Գրականուրեան զարձին է Արտի Իրավասեւեր սերունդին նույրուած հասորէն:

գունելի իրադարձութիւններու թիճուկ մը իրս այդ գեղանի այրին նետելու համար վէպին էջերուն։ Խոմանիթիք վէպին ամենէն կատաղի աշխատաւորը՝ ժօրժ Մանը անզամ պիտի գժուաբանար այդքան իրարու անկառապակից զրուագներ հիւսելու որպէսզի այդ տիկինը ինքզինքը պարզէր մեզի Պոլիս, ֆրանսա կոմսերու տունին մէջ տարօրինակ հիւնդութեանց մահիններու վրայ, և այդ ամբողջ իրադարձութիւնները նպատակ ունենար ծառայեցնել քանի մը մեզի համար չանցնող գաղափարներու պաշտպանութեան։ Մեր մտքին մէջ չնեղմուիր իր սիրահարին ետևէն Բարիզ մեկնող այդ սիրահարը ուրիշի մը հետ պատկուած տեսնել և այդ տեսաբանէն նուազած՝ փողոց ինկող և մարդասիրաբար զինքը իր դղեակին մէջ ընդունող կոմսի մը խնամքին ապաստանած զեղանի հայուհիի մը պատկերը։ Աւելորդ է ասանկ անբնական պայմաններու մէջ պարզ հեղինակին քմահաճոյքովը ոկիզբ առնող սիրային արկած մը նկատի առնել լրջութեամբ։ Աւելի քան աւելորդ՝ Մայորի տառաման լաստակերտող միւս կինը, Հերիք, որուն ո՛չ Փիզիքը և ո՛չ ալ հոգին չեն պատկանիր Մեր ժողովուրդին։ Տիկին Տիւսար այս Հերիքային մարմինը կը յօրինէ գասական արձանագործի մը պէս, ախորժելով, ինչպէս կ'սուն, մուրճ ձեռքը՝ պազպաջուն մարմարէն հանելու համար մեռած արձան մը։ Չեմ հետեւիր այս նկարազրութեան աւելորդ չքեցանքին։ Կնիկ մը նկարազրելը զրեթէ մեր մէջ արուեստի սեւ մը եղած է այդ թուականներէն մինչև հիմա։ Տիկին Տիւսար աւելի գժբախտ է, քանի որ պարապի վրայ կ'աշխատի։ Արեւելեան գեղեցկութեան այդ հաստ ներկայացուցիչը՝ Հերիքան, անշահեկան է զարձեալ իր հոգեկուն յօրինուածութեան տեսակէտէն։ Մարդ ակամայ կը հարցնէ. ի՞նչ պէտք ունէր այդ կինը այդ աստիճան ատելու Մայտան, որպէսզի զայն կործանելու համար անոր սիրածը ձգէ իր հրապորներուն ներքն։ Անջուշ կեանքին մէջ չատքաներ կը խուսափին մեր հասողութենէն, մանաւանդ մեր իրենցմէ պահանջած պայծառ պատասխաններէն։ Պարտաւոր եմ յայտարարել հոս որ նոյնիսկ Տիւսանեանին մէջ այս աստիճան անկարելի կին մը չունի գուտթիւն։ Տիկին Տիւսար չի կատածիր իսկ

թէ արուեստի գործի մը մէջ մարդերը ունին խորհրդանշական ասարողութիւն, թէ առնուազն պարտքին տակն են իրենցմէ աւելին ըլլալու, որպէսզի իրենց վրայով մեզի թելագրեն հոգեկան այն փորձարկութիւնները որոնք արուեստագէտին ջիւղերը չարժման հանեցին անոր ընկալուչ տարիներուն կի՞ն կը պակսէր Տիկին Տիւսարի, Նոյնիսկ անմիջական չըջապատին մէջ, սենեկելու համար իր ամռուսինը խարող տիպարը որ հարստութեան մէջն իսկ իր մեղքերը բարձի կը դնէ, և ատիկա ընկելով ինքինքը կը կարծէ ըլլալ արժեւորած։ Իբր Փիզիք և իրս հոգի ամբողջութեամբ ձախողանք այս կինը, անկարելի պարագաներուն, հանգէսին մէջ ոճարդարձութեան իսկ կը ձեռնարկէ, տարճանակ պարպելու ուրիշի վրայ և իր մատրութեան մէջ կ'արգելուի զրեթէ հրէշտին միջամտութեամբ մը մարդասպան ըլլալու։ Ով որ Մայորն կը կարդայ, կը զայրանայ այսքան անբաւական ապրումներու հանգէս մը պարզող սա կնոջ ներկայութեանը վրայ այդ էջերէն ներս կի՞ն տիպարներէն երրորդը, այդ զիրքին մէջ։ Արբանն է անպայման զոր հակառակի իմ բոլոր բարիկամեցողութեանս չեմ կրնար դարձեալ իրս կինդանի անձնաւորութիւնն մը արժեսորել։ Պոլիսը ձգող և Ազգականնեան կզզի մը (Քօրֆու) իր այրիութիւնը զուարճացնող, չըսելու համար կանաչնող տիպարի մը կերպարանքին ներքն անիկապիտի ըլլար առնուազն հասկնալի։ Քօրֆուն, կիսոյին առաջ, ոստանիկ զրօսավայր մըն է մասնաւորաբար իրենց հրապորներուն և առողջութեանը մէջ թեթևակի խանգարուած զգացող կիներու համար։ Քսան տարի առաջ ինձի արուեցաւ պատեհութիւնն Ալիրայի թիվով զերմաններ և ուռուեր տեսնելու այդ կզզիին մէջ։ Հասկնալի և իրաւ կիներ էին, հիւսնդութեան զակախխառն կարմիրը երեսներուն, տրտում և ուրախ, չնորհալի ինչպէս անմատոյց, աժան խուզարկութիւններու բայց բարձրօրէն ոռմանթիք արկածներու համար հեշտանուած հետաքրքրութիւններով։ Անոնց հետի իմ խօսքերուն ընթացքին այցելեց իմ մըտքին Տիւսարի Ալիրան, բայց հերքուելու ճակատագրով, նոյնիսկ այն պարագային ուր Մայորի Ալիրան խկապէս ըլլար տէրը զիր-



քին մէջ պարզուած ուղեղին, դարձեալ կը մասար անկարելի ինչպէս անհրական։ Գրքի այդ պատգամները, միսիթարողի այդ օճռն կեզծիքը, շպարը, մանաւանդ խոճաժանք վարողի ֆրանսական վէպէն փախաղրուած իր կիրաքարանքը որևէ աղերս չունի կիսաշխարհիկ կիներու այն տիպարին որ հիւանդներու ամառանցները, ջուրի քաղաքները, մենաւոր կղզիները և բացասարար օժտուած ծովափները կ'ընէ այնքան խորհրդաւոր, առնուազն իրաւ կեանքին վըրայ, և հասկնակի՝ վէպին մէջ, եթէ երրեք վիպողը արուեստագէտ մըն է, այդ բաները նոււաճելու չափ ընկալուչ զգայնութեամբ մը օժտուած, եթէ ոչ խելքով։ Արքան, ըստ վերը, երկրորդ կէսն է Մայտայի, անոր կարելի պատաւութեանը։ Տարիքէն այսպէս պայմանաւոր այս կինը բոլոր պատեհութիւնները կը մէկտեղէր իր վրայ, ոտքի նետելու համար առնոււազն Տիկին Տիւսաբի մայրը զոր չեմ գիտեր ո՛ր մեղքին համար տիպարէ այնքան տառապոզ այդ կինը չէ յաջողած մարմաւորել իր երեք վէպերուն մէջն ալ։ Տիկին Սիրա զրագէտ է, խորհոզ է, փորձառութիւն ծախոզ է, արձագանգ է, առանց ինքզինքը ըլլալու, Մայտային երկրող կեսը, երեսը։ Տիկին Տիւսաբ երեք վէպերուն մէջ ալ կ'ախործի հիւանդներ դնելէ։ Մայտային մէջ այն աղջիկը որուն հոգեվարքին ներկայ ըլլալու համար զրեթէ յուղիչ տեսարան մը յարդարած է վիպատանը։ Ինչպէս նաև ճակատագրական մատանին նշանին մատանին Մայտային առնելու չափ յուղիչ փափաք պարզած է իր մահուան անկողնին վրայ։ Մատանին այս փոխանցումը հիւանդին ամբողջ վէպին նախական զարդ շատագական մատանին մատանին մատանին Մայտային առնելու չափ յուղիչ փափաք պարզած է իր մատան անկողնին վրայ։ Մատանին այս փոխանցումը հիւանդին ամբողջ վէպին նախական զարդ շատագական մատանին մատանին մատանին Մայտային առնելու չափ յուղիչ փափաք պարզած է իր մատան անկողնին վրայ։ Մատանին առնելու պիտի զործածուի, Մայտային զինքը մերժելու հնարժունքը փառարկողը կը կրկնուի միւս երկու վէպերուն մէջ ալ։ Արդար ըլլալու համար սուիպուած եմ խոստովանիւ որ ամբողջ այդ վէպերուն չէնքերէն և անձնաւորութիւններէն այդ հիւանդ աղջնակներն են որ վիպական սուզ չնորհ մը կը պատացնեն իրենց ետեէն։ Ալբայչին մէջ յուղումը իրաւ իսկ

է այդ բոպէ առ բոպէ մարմրող աղջկան ցաւին զիմաց, Մարդ ակամայ կը փոքուի այդ երեք յաջողակ մահերու քնօմեթեն մէջը կարծես նախատեսել Տիւսաբի ահաւոր հոգեվիճակը, երբ դատապարտուած իր աղջկան կիսամեռ մարմինը Բարիզէն կը փոխադրէ Պոլիս, հանգչեցնելու չարաշուց մահման մէջը և ապրելու այն քանի մը ահաւոր շաբաթները օրոնց ընդմէջին խարտեաչ, զմայլելի այդ գեղեցիկութիւնը, պարման աղջկան մարմինը կաթիլ կաթիլ կը փոտի և ժանեակներու մէջ մահուան հարսկ'ըլլայ։ Կը հաւատամ թէ Տիկին Տիւսաբ մարդոց ձակտին զրուած ամենէն մէծ զարհուրանքը տարած իր վէպերուն մէջ այդ աղջիկներուն վրայ կախ էր միգամածի մը պէս։ Երբ կը ձգենք կիներու չարքը, մատենալու համար այրերուն, միշտ այդ վէպին մէջ, մենք չենք աւելի բարերախտ հանդիպելու համար քանի մը իրաւ այրերու։ Եթէ կիները անկարելի, ոււտ, չինծու են, այրերը աւելի դժբախտ են վասնզի խամտնկներ են ամբողջութեամբ, առանց ուկորի կակզամորթներ, որոնց վրայ արգահատանքն իսկ չատ կուգայ մէկի։ մարդ կը հարցնէ թէ ո՞ր ժողովուրդին կը պատկանի այդ Տիգրանը, որ լուսնի լոյսով սէր կ'ոււստէ երկտասարդ այրիին և յետոյ նախանձող կնոջ մը անձնարակ, բոլորովին վրանց խաղին զոհ կ'երթայ Եւրոպա, այդ կինէն խաղցուած, մատնուած։ բաւ սեպելով իր սիրածին իրմէն պազլիլը իր փաստ այդ մարդը կ'անցնի Անգլիա, կ'առնէ կին մը, անոր հետ պասկուելու համար կ'անցնի մերանսա, կ'ինայ աշքին զինքը վիճուակը եկած Մայտային, առանց անոր նուազիլը տեսնելու, յետոյ կը շարունակէ ապրիլ այդ կնոջ հետ . . . սիրելով միշտ Մայտան Լուսնային այս արկածներուն մէջ անոր սրբէն տկար անձնաւորութիւնը հիմնովին կը տքունի երբ կը դառնայ Պոլիս և իրեն սիրած հերիքային ոխակու ատրճանակէն կտագատէ Մայտան։ Այս բոլոր արկած տիբենդութիւնները մարդիկ պիտի ներէին սովորական թերթօններուն մէջ, բայց երբեք զրական յաւակնութեամբ ճարտարապետուած զործի մը մէջ։ Ուրիշ դժբախտ մատնուելով և զետեղուելիք անձնաւորութիւններէն է Հերիքայի սիրահարը որ անոր սկ

աչուըներուն համար յանձն կ'առնէ ամէն կարգի շոշորդութիւններ, իր վերջին պահուն քրանսական թերթօնի մը մէջ, վայել այլուրութեամբ մը իրականութեան ամէն զգայարանքէ, կը փութայ կացութիւնը փըրկել՝ Տիգրանը տեղեակ ընելով Հերիքայի գաւհրուն:

Անձնաւորութեանց այս չքախումբը, քիչ մը լայն տեսնուած, այլևս աւելորդ կ'ընծայէ Մայուսէն գուրս միւս վէպերուն մէջ ալ վերլուծում: Տիկին Տիւսար կը հետեւ թերթօնական վէպի դասական թէքնիքին: Միշտ գժրախս կին մը ու իր կըրկնակը: Միշտ հիւսնդ ազջիկներ: Երրիմ, բերանփախի համար կարծես, հայրեր, մայրեր (մանաւանդ Արտավազ համ Վարդասէն) որոնց պակսէր սակայն ցեղացին հարազատութեան տարտամ իսկ շնորհը: Աւ մարդ չի կրնար չհարցնել այս կնոջ, հերոս կը պակսէր որպէսպի ստիպուած ըլլար այսքան սուտ ու փուտ անձնաւորութիւններու վըստահիլ կառուցման որոշ կարողութիւն, վէպ մը քալեցնելու քանի մը զազփազփուն տուրքեր: Վերերը ըսի թէ որքան շահեկան պիտի ըլլային այդ վէպերը և լայնօրէն պիտի փրկէին իրենց զրիպանքը իրրե արռաւեստի գործ եթէ երրեք գէթ տիպարացին առաքինութիւններու ըլլար հաւատարիմ մեացած այդ մարդերու ստեղծիչը: Հետաքրական է որ Տիւսարի ստեղծումները կանխող մեր քանի մը վէպերը (Մամուրեան զիսաւորաբար) կրկնին նոյն մեղքերը որոնք կը թուին թարգմանական զարժութիւններու ծնունդ ըլլալ: Տիկին Տիւսարի համար մասնաւորաբար մարդերու իրականութիւնը փոքրագոյն իսկ տագնապ մը չէ արժած, զբազած ըլլալով ատոնց առիթով քանի մը կարկտան զազփարներ արժենորիլու մեծ ու հերոսական հարցով: Մըտքով կը տարուիմ Անելուշան Արտավազ ճը վէպին որ իր բոլոր անբաւարարութիւնները կը զիմաւորէ պարզ իր հերոսներուն զնուական իրականութեամբը: Իրապաշտ վէպին ամենէն մեծ ձիգը, Անելուշան Արտավազ, նոյն պայմաններով իր կառուցման բոլոր թերութիւնները կը յաջողի զիմաւակալի, ըլլալու համար յաղթանակ մը, որովհետեւ իր առած մարդերը աւելի քան իրաւ են: Ալ չեմ խօսիր Վարդասէն Արտավազ վէպին բոլոր անձնաւորութիւններէն որոնց ամենէն

յետինն իսկ ուժուունական թուականներուն կը պատկանի անջնջելի հարազատութեամբ: Նոյնիսկ ոսմանթիք Բուրուլը (Աշխան Ճը Ալբար, Ալիպիլ) ծանրակառոյց իր պուպրիկութիւնը զարդամոլութեան մէջն կիրապ կը զտնէ զնելու, և մնալով հանդերձ քիչ մը երազունակ, fantastique (վէպին առաջին մասը), կ'ըլլայ իրաւ կին մը վէպին երկրորդ մասին մէջ: Տիկին Տիւսարի բոլոր անձերը ոչ մէկ ժողովուրդի կը պատկանին և ատով զուրս են լրջութենէ: Եթէ զրազեցայ այսքան ատոնցմով՝ պատճառը իրենցմէ զուրս ըրջանային ճաշակներու մասին իրենց քերած վկայութեան մէջն է: Այդ օրերուն մարդիկ կը հաւատային վէպ զրել ճիշդ նոյն այլուրութեամբ որպէս տասը տասնըհինգ տարի առաջ կը գրէին թատրոն: Իրականութեան մեր զգայարանքը մեր գրականութեան մէջ կը մտնէ Իրապաշներով: Մեր Ռումանիթիքները (վաւերականները) գժուարութեան մէջ չէին իրաւ բանասեղծներ ըլլալու, քանի որ այդ պարտքին համար ունէին տրամադրելի առնուապն սեպհական յոյզեր: Աւ մենք ունեցանք յաջող բանասեղծներ այդ սերունդէն: Վէպին նկարագիրն է ինքնիրմէ զուրս ելլերու կարողութիւնը մը: Որքան ատեն որ այս հիմնական տուրքը կը պակսի որեէ զրողի, գժուար է ոճով, մտածումով, նոյնիսկ արկածախնդրական կառույցներու հանդէպ որոշ ընդունակութիւններով անցնիլ թուղթին առջն և լիցնել ... 300 է: Տիկին Տիւսար այս միայն ըրած է և պատճուած:

Տիկին Տիւսարի անձը խորհրդաւոր, նոյնիսկ հրապուրիչ կողմերով հանդէս մը եղաւ աւելի քան քառորդ գար: Իր անունը կապուած է մեր իրաւ բանասեղծներէն մէկուն, անքակտելի եղերականութիւնը մը: Իր գործը, գէթ իրը մտադրութիւն՝ պարկեշտ, նոյնիսկ առաքինի արարք մըն է: Իր օրինակը՝ աւելի քան խանդավանիլ է: Այլ մատի չեմ փաթթեր անոր իրաւունքը Զարթօնքի սերունդին մէջ իր որոշ աեզնն: Որքան ալ համեստ, այդ տեղը ունի մթին հրապուր մը այդ օրերը զատովին աչքին: Մայր մըն է, կին մը ըլլալէ առաջ, բայց մանաւանդ զրող մը ըլլալէ առաջ:

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԵԿԱՆՊԱՊ ԱՐՃԱԿՈՒՆԻ

Դ Ա Ռ Ա Խ Ա Յ Ա Տ Ա Տ Ա Մ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Դաւաճանք քաղաքական կեանքի մէջ, որ Շապուհի բանակներու առջևն ինկած Հայաստան եկան: Դաւաճան իրենց հաւատքին, ուր երկուքն ալ ուրացան քրիստոնէութիւնը և պաշտեցին Մազդէզական կրօնը, և ոգի ի բախն աշխատեցան տարածել զայն Հայաստանի մէջ: Իսկ Վահան Մամիկոնեան, մոսցած իր քրիստոնեայ տիկինը, մոսցած իր քրիստոնեայ զաւակը Սամուէլ, ամուսնացաւ Շապուհի քոյրերէն միոյն, Արմիզզութիստի: Ձիւազ մը անասնը, որուն սպանութիւնը իր իսկ զաւեկին ձեռքով՝ հազիւթէ զառն գոհացում կրնայ տալ մէզ: Եւ վերջապէս, զաւաճան հայ ժողովուրդին, որուն կարգերը աւրչտկեցին, քաղաքները կործանեցին, և այր ու կին բազմութիւններ կտորել տուին(16):

Մամիկոնեաններու ջատագով պատմիչ Փաւատոսն է որ կը ներկայացնէ այս դաւաճանները, մանաւանդ Վահան Մամիկոնեան, ու է կառկած չձգեր անոնց նկարագրին և գործին:

Վերեւի երկուքին կը միանայ Մարդպական ցեղէն Գղակ(17):

Ի՞նչպէս բացատրել որ Մարդպական տահմի անդամներէն, այն քան' նույրուած Արշակունի զահին, ինչպէս Հայր Մարդպակա և Դրաստամատ, գտնուի մէկը Շապուհին ծառայող, բացի Պարսիկի կողմէ

եղած փայլուն և հրապուրիչ խոստումների տարուած: Գղակի մասին մէր այս հնիքադրութիւնը կը զօրանայ, երբ Արտազերս ամրոցի պաշարման ատեն, ա'լ աւելի լացուցիչ խոստումէ տարուած, Գղակ կը փոխէ զիրքը, ինչպէս կը տեսնենք իր տեղին:

Մերուժան Արծրունին շատ ալ պնդելու հարկ չունէր՝ համոզելու Շապուհը, որ Մերուժանին պարսկական գումարտակներ յանձնէ, Հայաստանը պարսիկ նժարին մէջ զնելու: Թանկագին պատեհութիւնը եկած էր, և ժամանակ կորսնցնելու չէր հայ աշխարհէն բիւզանդական տզգեցութիւնը արժատախիլ ընելու: Երկաթը տաք տաք ծեծուելու է: Շապուհ զիտնալու էր որ Արշակ թագաւոր, Անդովկ Սիւնի, Վասար Մամիկոննեան և Բիւզանդական կուսակցութեան միւս նախարարները չէին քնանար: Արշակ զագրեցուցած էր պայքարը իշխաններու զէմ և զանոնք սիրաշահելու հուեւէ էր: Ներսէս կաթողիկոս տարի մը առաջ Պոլիս զրկուած էր, անշուշտ կայսեր օդնութիւնը ապահովելու:

Մեծ պարսկական բանակ մը շարժմած դրուեցաւ, Զիկ և Կարէն զօրավարներու հրամանատարութեան տակ, և առաջնորդ գութեամբ Մերուժան Արծրունիի, Վահան Մամիկոննեանի ու իրենց հայ գործակիցներուն, Մարտաստանի կողմէ մտան Հայատան, մինչ Արշակ թագաւոր կը գտնուէր հարաւ Անդովկ տան գաւառին, իր բանակի, մանաւանդ հեծելազօրքի համար տատուեստեղէն աւելի զիւրութեամբ հոնաբուժուն(18):

(16) Փաւատոս, Դ. 23, 24: Խորենացի, Գ. 36: Փաւատոս, Դ. 50, 59.

(17) Փաւատոս, Ե. 6: Ammianus, XXVII, 12, 5, Պատման մը չկայ կառկածելու թէ Ամմիանոսի յիշած Cylages-ը Գղակէն ուրիշ մէկը Ըլլայ, մանաւանդ որ անոր ներքինի մը եղած Ըլլայ ալ կը գրէ: Փաւատոս ներքինին անունը տեղ մը Դպլակ կը կռչէ, յետոյ Դղակ:

Մերուժան Արծրունիի առաջնորդած քանակը անխնայ աւերածութեան միտքնուեցաւ, Արշակ թագաւորի հրամանին տակ գանուզ զօրքը ստուարաթիւ չըլլալուն, արքան կը խուսափէր բաց դաշտի մէջ ճակատելէ պարսիկ բանակին դէմ, և այս պարագան կը քաջալերէր Մերուժան Արծրունին սանձարձակ գործելու: Մին միւսի եռուէ գրաւեցին և կործանեցին Արտաշատ, Վաղարշապատ, Երուանդաշատ, Բագրեւանդի Զարեհաւան, Ազիհովիտ գաւառի Զարիշատ, յետոյ վան քաղաքները: Գանձերը կողոպտուեցան: Բնակչութենէն շատեր սրակոստոր եղան: Հայ և հրեայ ընտանիքները գերի տարուեցան: Դարանազիք գաւառի Անի ամրոցին մէջ թաղուած Արշակունի թագաւորներու գերեզմանները բացին, սոկորները գերի տարին, հեթանոսական այն աւելորդապաշտ հաւատքով թէ. սՄենք հայոց թագաւորներու սոկորները մեր աշխարհը կը տանինք, որ այս աշխարհի թագաւորներու փառքը, բախտն ու քաջութիւնը այստեղէն թագաւորներու սոկորներուն հետ մեր աշխարհը փոխագրուինս⁽¹⁹⁾:

Բիւզանդական Կուսակցութեան նախարարներէն շատեր, ինչպէս նաև ուրիշ իշխաններ, շտապով փախուստ կուտային, ապաստան փնտռելու Բիւզանդական հողամասի վրայ, կամ անառիկ լեռնային ամրութիւններու մէջ:

Մերուժան Արծրունի և Վահան Մամիկոննեան՝ փախոստականներու կինները ձերբակալել տալով պահեցին բերդերու մէջ: Անոնց առաջարկուեցաւ ընդունիլ Մազդեզական կրօնը, և մերժենուն՝ չարչարանքով սպանուեցան: Վահան Մամիկոննեան չխնայեց նոյնիսկ իր խորթ քրոջ՝ Համազառպուհին: Տիկինը Գարեգին Ռշատունիի կինն էր: Գարեգին փախուստ տուած իշխաններու հետ: Վահան տանջել տուաւ Համազառպուհին, անոր առաջարկեց կրօնափոխ ըլլալ: Տիկինը մերժելուն, Վահանի հրամանով մերկացուցին զայն, և Վահայ միջնաբերդի բարձր աշտարակէն գլխիվայր կախեցին մինչև մեռնիլլ⁽²⁰⁾:

Միւնեաց գաւառի մէջ անսահման ա-

տելութեամբ վարուեցան, իրենց վրէժը լուծելու համար Անդովիկ իշխանէն, Արշակ թագաւորի աներէն: Մարդ և կին, ով որ կրցան սպանեցին, մանուկներուն ներքին նիացնելով, Պարսկաստան զրկեցին⁽²¹⁾:

Մերուժան և Վահան, Քրիստոնեայ Եկեղեցին բիւզանդական ազգեցութեան սնուցանող և քաջալերիչ համարելով, Եկեղեցին և հեկեղեցականութիւնը ենթարկեցին հալածանքի: Յունարէն ամէն զիրք որ գտան փնացուցին, որովհետեւ, կ'ըսէ Խորենացին, այդ ժամանակ գես հայերէն զիրք գրականութիւնը չկար, և Եկեղեցոյ կարգը կը կատարուէր յունական լեզովք: Կը խոչտանգէին եկեղեցականները, ըսելով թէ թերացած են տուրքիր գանձելու մէջ, որովհետեւ այդ ատեն պետական հարկերու գանձումը յանձնուած էր կաթողիկոսներուն, որոնք այդ պարտականութիւնը կը կատարէին թեմերու եպիսկոպոսներուն և քահանաներուն միջնոցաւ⁽²²⁾:

Այս զէպքերուն թուականը մօտաւորագէս 364 կամ 365ին էր: Խորենացին կ'ըսէ թէ Մերուժան Արծրունին՝ Արշակ թագաւորի մահէն վերջ գործազրեց իր չարիքները: Բայց այդ հաւանական չխռուիր: Արշակի մահը 367-370 տարիններու մէջ եղած կրնայ ըլլալ, երբ արքէն Բիւզանդիոնի արքունիքը, ձախաւեր զաշինքը ոտքի տակ առնելով, Հայաստանի գործերուն միջամուխ ըլլալու համար զօրաւոր քայլեր կ'առնէ: Խորենացի մէջ առնելու արքունիքը այդքան պիտի սպասէր Հայաստանը իր ազգեցութեան տակ ձգելու համար, երբ զաշնագրի զիլսաւոր պայմաններէն մէկը բրած էր այդ, իրեն աշքին այնքա՞ն կինսական խնդիրը:

Ապա, 364 Փետրուարի մէջ Յովիսանոս կայսեր յանկարծական մահը, հազիւ ութ ամիս կայսերական ծիրանին կրելէ վերջ, յարմարագոյն պատճենութիւնը կ'ընձեռէր Շապուհին հայկական հարցը լուծելու: Ամմանոսի վկայութիւնն ալ կը միտի 364 կամ 365 տարեթիւնն, երբ կը զրէ թէ պարսկաներու թագաւորը զօրագունդեր կը յլէր Հայաստան, աճապարելով միծամիծ:

(19) Ammianus, XXV, 7, 12: Փաւասոս, Դ. 24,

55: Խորենացի, Գ. 35, 36:

(20) Փաւասոս, Գ. 59:

(21) Փաւասոս, Գ. 58:

(22) Խորենացի, Գ. 36:

ճիպերով այդ երկիրը իր գերիշխանութեան սակ ձգել, այն կեղծ պատճառաբանութեամբ թէ, Յովիանոսի մահէն զիրջ, ո՞չ մէկ բան կրնար արգիլել զինք վերագրաւելու այն որ առաջուց իր նախահայրերուն պատկանած էր⁽²³⁾. իմա՞ հին Պարսկաստանի, Դարեհնի և Բասրքուսի կայսրութեան, որու անունով խօսելէ, հպարտանալէ, ըստ պատճենի և պահանջելէ բնաւ չգագրեցաւ Շապուհ:

Միքրոժանի և Վահանի այս սանձարձակ դորձունելութեան դէմ, Արշակի սպարապետ Վասակ Մամիկոնեանը և Անդովի Արւելին, իրենց փոքրաթիւ զինուորներու պատճառաւ, ստիպուած ասպատակային կայսեր կը մղէին: Տեղ տեղ ալ յաջողութիւն ձեռք կը ձգէին, թէ ե հեռու վճռական ըլլալէ: Գերի տարուած խումբերէն շատեր՝ Վասակ յաջողեցաւ փրկել: Ան նոյնիսկ ետ վերցուց Արշակունի թագաւորներու ուկորները, կ'երսի անոնց կախարդական ուժին ինքն ալ և հայ ժողովուրդն ալ կը հաւատային, ու այդ նշխարները Արագած լերան նեղ ու գժուարամուտ խորշերէն միոյն մէջ գտնուող Ալձք անունով անառիկ զիւղի մը մէջ թաղեցին⁽²⁴⁾:

Ի՞նչ մտատանջութիւն և կակիծ ունեցած ըլլալու էր՝ Արշակ թագաւորի այս նույիրեալ և քաջարի սպարապետը Վասակ, տեսնելու թէ իր իսկ հարազատ եղբայրը, Վահան Մամիկոնեան, կարելին կ'ընէր Հայաստան աշխարհը դժոխքի վերածելու: Սպարապետը, հակառակ կարճահասակ անձ մը ըլլալուն, հերոսական տիպար մըն էր՝ երբ ինդիրը կը վերաբերէր Արշակ թագաւորի անունն ու վարկը ու կեանքը պաշտպանելու: Նոյնիսկ, պարսիկ մայրաքաղաքի մէջ, Շապուհի արքունի ախոսուափետը ուռով տեղն ու տեղին կը սպանէր, որովհետեւ այս վերջինը համարձակած էր նախատական երկու բառ արտասանելու Արշակ թագաւորի հասցէին. Այժերու թագաւոր:

Հայաստանի Պարսկական Կուսակցութիւնը իր փառքի արիւնալի ժամը կ'ապրէր: Տարիներով սպասեր էին այս պատճենութեան, և այժմ երբ այդ եկած էր, տեսան թէ իրենց երեւակայածէն շատ աւելի խոս-

տըմնալի: շատ աւելի կատարեալ էր: Եւ մինչ կացութեան տէրն էին պիտի զարնէին արագ և կտրական: Իրենց աչքին այնքան ատելի բիւզանդական սրոմերը արմատախիլ պիտի ընէին հայ պիտական կեանքէն, և վերջապէս Հայաստանի ճակատազրին թելերը իրենց ձեռքին մէջ առած, Տիգրանի հոկոզ աշքին տակ, պիտի հիւուին զանգեքինչպէս կը կամբենացին:

Եթէ Արշակունի գահակալը տակալին կ'ուզէր պահել իր գահը, սահմառած էր իրենցմէ ստանալ ուղղութիւն և հրահանգ:

3. ԵՊԵՐԱԿԱՆ ԱՆԿՈՒՄ ԱՐԾԱԿԻ

Յովիանոս կայսր 363ի վերջին Անտիոքին մեկնեցաւ զէպի Պոլիս: Փետրուար 17, 364ին, հասաւ Բիւթանիա գաւառի սահմանին մօտ Տատառթանա անունով աննշան զիւղ մը, ուր պիտի զիշերէր: Առատ կերութումէ վերջ, ննջառնենեակ զնաց: Առաջուն մեռած գտնուեցաւ:

Երբ Ներսէս կաթողիկոս, որպէս Արշակի զրկած զիսպանութեան զլուխ, կառտանդնու պոլիս հասաւ, Աղջափառեան Յովիանոս կայսեր պարզելու Հայաստանի ճգնաժամային կացութիւնը և նոր զաշինքի մը մասին բանակցելու, հոն գտաւ նոր կայսր մը, Վաղէս, մօլիսանդ Արիստան:

Նոր կայսրը մերժեց նման զաշինքի մը մասին բանակցիլ, անշուշտ քաղաքական պատճառներով: Մէկ կողմէ Գողթական ցիշերու խլբառութերը Դանուքը զետէն անդին, միւս կողմէ, ինք զիս նոր գահ բարձրացած, Շապուհի և Յովիանոսի մէջն կընքուած 30 ամեայ խաղաղութեան զաշինքը, առաջին տարին զիս չըոլորած պատել, յինուելով Տիգրիսիան արշաւանքի տաղնապնիրէն յոգնած և ջարդուած լեզէններու վրայ, խելացի քայլ մը չէր: Նոյնիսկ եթէ համոզուած ալ ըլլար, որ Բիւթանդական ազգեցութիւնը Հայաստանէն վերնալու չէր: Այդ մէկ էտին վաղէս համոզուած էր, ինչպէս յետոյ կը տեսնենք:

Ներսէս ձեռնունայն վերագրածաւ Հայաստան:

Զինք կրնար ընդունիլ Փաւոսոսի և Խորենացի բսածները թէ Վաղէս աքսորեց Ներսէսը ամայի կղզի մը, ուր ան թաց իր բախտակից ընկերներով, ըստ Փաւոսոսի,

(23) Ammianus, XXVI, 4, 6.

(24) Փաւոսոս, 7. 24.

մինչև Վաղէսի մահը, 378 թուականին, Ներսէս մեռաւ 372ին), ըստ Խորենացիի, ինն ամիս։ Երկու մատենագիրներն ալ, Վաղէսի հալածանքները Աւզդափառեան քրիստոնեաներուն ի մտի ունենալով, աքսորի պատմութիւնը — ճոխացած Ներսէսի կատարած հրաշագործութիւններով ամայի կղզիի վրայ — կը շարագրեն, կաթողիկոսի լուսապատկը աւելի պայծառացնելու համար, որուն, ըստ իս, մեծ Հայրապետը պէտք չունէր⁽²⁵⁾։

Իսկ Փաւստոս այնքան յառաջ կ'հրթայ, որ կը պատմէ թէ, երբ դեսպանութեան մասնակցող նախարարներ վերագարձան և Ներսէսի աքսորի լուրը հաղորդեցին Արշակին, թագաւորը զայրացաւ և այս նախատինքին վրէժը լուծելու համար, հրամայեց Վասուկ զօրավարին արշաւել Գայթիրքի կողմէրը և աւերել յունական հողերը։ Վասուկն ալ, 260.000 զօրքով, վեց տարի կ'աւերէ կ'աւերշտէ մինչև Անշիւրիա քաղաքը⁽²⁶⁾։

Ներսէս զհսպանութեան մը գլուխին էր, Հայաստանի թագաւորի հօրաքրոջ որդին, իր կարգին, Արշակունի իշխան մը կայսր մը, և այդ ալ քաղաքակիրթ կառավարութեան մը կայսրը, ի՞նչպէս կրնար աքսորել զինք։ Բարբարոսներու կողմէ իսկ զհսպանի անձը անձեռնմխելի կը համարուերի ուր մեաց բիւզանդական գահակալէ մը։

Ներսէսի անյաջողութիւնը՝ Արշակի քրիտիկական կացութիւնը իրական և անմիջական ճգնաժամի մը փոխեց։ Այս անգամ նայնիւն իրեն հետ գործ ակցող նախարարներ բողոքի ձայն բարձրացուցին։ Առանց Բիւզանդիոնի ազգու օգնութեան, թագաւորը ի՞նչպէս կ'ակնկալէր փրկել ինքինքը և Հայաստանը Շապուհի սարսափազդու սպանալիքէն։ Արքան աւեն որ պայքարը շահելու յոյսը այլնու կը ցնողէր, ի՞նչ գարձատրութիւն և ի՞նչ ապազայ կը սպասէր այս հաւատատրիմ նախարարներուն։ Մինչդեռ Շապուհի թմրուկը զարնող իշխանները, Արքութան Արծրունի, Վահան Մամիկոնեան և անոնց ընկերները, ոչ միայն պարսիկ թագաւորէն վասոք, պատիւ և պարզե կը ստանային, այլ շատ չանցած

տէրը պիտի ըլլային Հայաստանի, և եթէ Արշակը գահազուրկ չընէին, պլիտի ստապէին որ յետ այսու կամակոր արքան հետեւի իրենց ցուցմունքներուն։ Արշակ թագաւոր պէտք է մի կերպ համաձայնութեան գար Շապուհի հետ։ Առ այժմ ուրիշ ճարչկար։

Իշխանները իրենց բողոքը յայտնեցին Ներսէս կաթողիկոսին։ Իրենց դառնացած արտայայտութիւնը սպանալի չեւս ստացաւ։ Այսքան տարի հաւատարմօրէն ծառայեր էին Արշակ թագաւորին, իրենց սերեսներուն քրտինքը սրբած էին սուրբերով, ուստի քններով, նիվակներու տէգերովն, և ի՞նչ արդիւնք ստացած էին։ Աւելի լաւ չէր ըլլար որ իրենք ալ հնագանդէին Շապուհին, ինչպէս իրենց հակառակորդները ըրած էին, ու այդպէսով քառու և արիւնակութիւնն վերջ գտնէին։ Ալ ի՞նչ յօյսով կոռւելու էին։

Ներսէս կաթողիկոս ծառացաւ Շապուհին անձնատուր ըլլալու գաղափարին դէմ։ Ան, — ինչպէս իրմէ վերջ իր մեծահամբաւ զաւակը Սահակ կաթողիկոս —, համոզուած էր թէ Եկեղեցիի ապահովութեան մեծագոյն զօրավիզն էր քրիստոնեայ Արշակունի գահին պահպանումը։ Թագաւորը կրնար ատելի ըլլալ և մերժուիլ, բայց գահը, արքայական հարստութիւնը, պէտք էր պահպանուեր։

Որքան յատկանչական է նմանութիւնը Ներսէսի յանդիմանական խօսքերուն։ Արշակի դէմ բողոքով նախարարներուն, և կէս դար վերջ, Սահակ Պարթենի կշամարանքին։ Արտաշէս թագաւորի դէմ բողոքողներուն։

Ներսէսի համար անկարելի էր հանդուրժել Քրիստոսի սիսերմ թշնամի կրտակալաշ Շապուհին։ Այդ շարանինդ ըլլանակալին, որ իր պետութեան սահմաններուն մէջ անհամբ քրիստոնեաներ չարդած էր։

Կաթողիկոսը զարոյթով ընդդիմարանեց։ տարհամոզելու իրենց տեսակետին մէջ պնդով յամա իշխանները։ Ինքն ալ գիտէր թէ Արշակունիներէն սմանք, զոր օրինակ՝ Արշակ, սուրբեր չէին, անարդար արտրքներ զործած էին, բայց այդ պատճառ մը ըլլալու չէր՝ այսպիսի աղէտարեք քայլ մը առնելու։ Վիուք ահա բոլորդ կաք

(25) Փաւստոս, Դ. 6, Խորենացի, Պ. 30։

(26) Փաւստոս, Դ. 11։

ու վկայ էք, որ բոլորդ Արշակունիաց ազգին էք ձեռք բերած ձեր զիրքը: Զեզմէ ամանք անոնցմէ նշանակուած են գաւառներու տէրեր, ոմանք աշխարհներու մեծամեծներ, ոմանք խոչսոր աւաններու և զիւղերու, ոմանք գանձերու և դաստակերուներու: . . . Արշակունիաց պիղդ ազգը ձեզ բոլորդ ազրէն բարձրացուցած և ապրեցուցած է, մէկուն զործ տալով, միւսօրն պատիւ, մէկուն իշխանութիւն, միւսօրն զործակալութիւն: . . . Արշակը թէկուզ բիւր անգամ ալ չար ըլլայ՝ սակայն աստուածապատ է, որքան ալ մեզաւոր ըլլայ՝ սակայն ձեր թագաւորն է . . . »⁽²⁷⁾:

Նորանոր հարուածներ իրարու յաջորդեցին: Մայրագաւառներու իշխաններէն ամեծամեծ աւագներու, չատեր սկսան ապրուամբիլ Արշակ թագաւորին դէմ, անշառչու Շապուհի քաջալերութեամբ, և անոր պաշտպանութեան յինլով: Ազգնիքի, Նորշիրականի և Գուգարքի բղեջխները, Մահկերտուն, Նիհորական, Զորաց, Կողը, Գարտմանածոր, Արձախ, Տմարիք, Կորդիք, Կոսորից տէրերը:

Իսկ երկու հատն ալ, Անձիսի տէրը և Մեծ Ծոփքի իշխանը, ապրուամբելով, բիւզանդական կայսեր հպատակութիւն յայտնեցին:⁽²⁸⁾

Միւս կողմէ, Շապուհի պատգամաւորներ կուգային Արշակ թագաւորին, առատ ընծաներով, և առաջարկելով որ երկու թագաւորներ, սիրեւ հայր և որդիս, տեսսակցութիւն ունենան, բոլոր անհասկացուզութիւններուն վերջ տալու, և երկուքին միջև բարեկամութեան ու խազաղութեան դաշինք կնքելու:

Պարսիկ թագաւորը, անշառչու իր հայ արքանեակներու թելագրութեամբ, պնդեց որ Արշակ գայ իր մօտ: Ան հանդիսաւոր երդում ըրաւ, որը կը բաղկանար իր անունը վրան փորագրուած մատանիով ազը կնքել, վստահեցնելու Արշակը որ ունէ նենգութիւն տեղի չէր կընար ունենալ նման նուիրական երդումէ վերջ:

Իսկ հայ մեծամեծներ ամէն կողմէ ստիպեցին որ Արշակ ընդունի հրաւերը, թէ Շապուհ անկեղծ էր, և իրագէս կ'ու-

գէր վերջ տալ քաղաքական երկարան տագնապին, որ երկու երկիրներու թէ քաղաքական և թէ անտեսական յարաք, բութիւնները խաթարեր էր:

Հայ թագաւորին համար երկիրներան չէր մեացած: Երթալու էր: Կրծայ ըլլալ և Շապուհ իրագէս անկեղծ էր: Անցեալի մէջ անգամ մը ինք և սպարապետ վասակ Տիգրոս այցելած էին, և ողջ առօղջ վերագարձած: Միւնոյնը կրնար պատահի հրմա:

Արշակ և Վասակ դարձեալ ճամբարներն պարսիկ մայրաքաղաքը, և այլեւ չվերացարձան(⁽²⁹⁾): Վասակին հատ էին իրեք որպինները, Մուշեղ, Մահնուէլ և Կանայց անդրանիկը Մուշեղ վախուսատու և չգնաց(⁽³⁰⁾):

Իր հանդիսաւոր երդումը ստքի աստիճանիով, Շապուհ նախատեց հայոց թագաւորը, և զղթայի գարնել տալով — սամաթ չզիթայ, չէ՞ որ կալանաւորը թագաւորն էր, ինչոք կարելի էր անարգել զին հասարակ երկարէ զղթայով — զրից զայ կլուժատանի Անյուշ բերդը: Հայ Արշակնամասապան պիտի ըլլար յաւզիչ պարագաներու տակ:

Արշակ Բ. հզօր և բարդ անհատականութիւնը թագաւոր մը եղաւ:

Երբ կը վերաքննինք իր պետական գործունեութիւնը, խառն զգացում մէ հրացմունքի և սարսափի, կը պատէ մեզ հիացնէ մեզ:

Իր զիտակցիլը թէ Արշակունի հնագարեան հարստութիւնը գէպի անկում կը զիմէ: և իր անդրգունելի որոշումը ատոր քայլքայման ընթացքը ոչ մինակ կատեցնելու, այլ կրկին անգամ հին վեհապետական անտարակուսելի կարողութեամբ օժտելու, և հիացնէ մեզ:

ԱՐԱԿՈՒ Ք. ԱՐՄԵՆ

Շաբանակել (19)



(27) Փաւատոս, Դ. 51:

(28) Փաւատոս, Դ. 50, Ե. 9-19:

(29) Ammianus, XXVII, 12, 3: Փաւատոս, Դ. 52, 53: Խորենացի, Դ. 34:

(30) Մեսրոպ երէց, 116.

ԵՐԱԺՇԱԳԻՏԱԿԱՆ

ՄԻԶՆԱԴՐԱՐԵԱՆ ՀԱՅ ԿՈՄՄՈԳԻՏՈՐՆԵՐ

14.

ԵՐԱԺԵՏԱԳԵՏ

ԿԵՐՈՒԷԾ ԼԱՄԲՐՈԽԱՑԻ



Տասնեւերկորդ դարի նշանաւոր պերճախօս - ճարտարաբան և կրօնական փայլուն մատենագիր Ներսէս Լամբրոնացին հայ եկեղեցական պատմութեան զիլսաւոր դէմքերից մէկն է: Ծնուել է նա Լամբրոն անառիկ բերդում, 1154 թուին: Հայրը՝ Օչին Բ., Լամբրոնի և ըրջակայքի տէրն էր և Ակեռայի պատմական վանքի հիմնադիրը, իսկ մայրը՝ Շահնիդուխտը, Ներսէս Շնորհալու կրտսեր եղբօր՝ Շահանի գուստըն էր:

Լամբրոնացու աշխարհական անունն էր Մերատ. շատ փոքր հասակում ծանր հիւանդանում է: ծնողներն ուխտում են, որ երբ առողջանայ, նուիրեն Ակեռայի վանքին, որպէսզի ծառայէ Առաւելոյ տաճարում, բայց նրանք իրենց խստումը չեն կատարում: Մերատն աւելի ծանր հիւանդանում է: Այս անգամ ծնողները նրան յանձնում են Ակեռայի վանքին, ուր նա ուսանում է և կրթւում: Այնուհետև նրան տեսնում ենք Սաղրուի օՍ. Աստուածածին վանքում, ուր ուսուցանում էր ժամանակի յայտնի գիտնական Յովհաննէս վարդապետը: Ամբողջ չորս տարի Մերատը Սաղրու վանքում ուսման և գիտութեան մէջ աւելի է խորանում և զարգանում: Այլտեղ էլ նա հմտանում է յունարէն, լատիներէն և ասորերէն լիզուների մէջ, միաժամանակ լրում է մեկնութիւններ և սուրբերի վարքերն է թարգմանում: Ատկայն, Ամբատի կեանքի և ուսման համար սկսում է մի նոր ըջան, երբ 12րդ դարի տաղանդաւոր բանաստեղծ - երաժիշտ Ներսէս Շնորհալին իր մօտ է բերում Հռոմեայ և անձամբ հսկում նրա ուսման վրայ: Երկու տարի յետոյ Ներսէս Շնորհալին 18 տարեկան Ամբատին կուսակրօն քահանայ է ձեռնադրում և կո-

չում է ներսէս: Այնուհետև նա գնում է Սաղրուի վանքը, այցելում է Անտառոքի ըրջանի մենաստանները և երկար ժամանակ ապրում է Սեաւ լեռան վանքերում: 1176 թուին, Գրիգոր Տղայ կաթողիկոսը նրան, 22 տարեկան հասակում, եպիսկոպոս է ձեռնադրում, իսկ որոշ ժամանակից յետոյ արքեպիսկոպոսի աստիճան տալով, նրան է յանձնում Տարսոնի և Լամբրոնի եպիսկոպոսութիւնը, միաժամանակ Սկեռայ վանքի առաջնորդութիւնը: Այդ ըրջանում նա յաճախ ճամբրոդրում է Սիս, Հռոմեայ և ամբողջ հոգով լծւում է հասարակական և եկեղեցական արգիւնաւէտ աշխատանքի: Սում նա գտանում է Լեռն թագաւորի խորհրդատուն և խմբագրում է հայոց արքայի օտար երկների հետ ունեցած թըզթակցութիւնները, իսկ Հռոմեայում Գրիգոր Տղայ կաթողիկոսի հետ շարադրում յունաց պատրիարքին գրուած նամակները: Այդ ըրջանումն էլ նա յոյների հետ եկեղեցական միութեան խնդիրն իրացրոծելու համար, մեկնում է Պոլիս, բայց յոյն գիտնական եկեղեցականների հետ չի կարողանում որոշ համաձայնութեան գալ, որով յուսահատ վերադառնում է Սկեռա վանքը և նուիրում հայոց եկեղեցու բարեկարգութիւն գործին: Որոշ փոփոխութիւնների մէջ: Այդ նորաձեռնութիւնների գէմ Լեռն թագաւորին խստի բողոքում են արևելին եպիսկոպոսները, որոնց Լամբրոնացին կոչում է: «Ժխմարք ու անկարգ»:

Աւշագրաւ է մի հանգամանք: Օչին Բ., իշխաններ, Ներսէս Լամբրոնացու հայրը, ժառանգ է թողնում նրան մեծ հարստութիւն: Նա այդ գումարի մի մասը նուիրում է Ակեռայի ու Սաղրուի վանքերին, որոշ մասը տրամադրում է գրքերի և թարգմանութիւնների համար, իսկ մնացեալ գումարը յատկացնում է աղքատներին:

Լամբրոնացին երիտասարդական ըրջանից նուիրում է զրականութիւնն և իր ժամանակի հայ մատենագրութեան էջերը հարստացնում է մի շարք ինքնուրոյն և թարգմանական երկերով: Դրանցից ուշագրաւ է իր պապի Ներսէս Շնորհալու կենսագրութիւնը: Դա անպանոյն մի պօէմա է քնարական պարզ քերթուած, որի ճառագրական կատին կարդում ենք. «Պովետ ներբողական կարդում է անկարգ»:

իան պատմագրական բանիւ յաղագս վարուց մնձի Հայրապետին տեսան ներսիսի կլայեցւոյ հայոց կաթողիկոսիւ։ Դա ստանաւորով գրուած հայերէն առաջին կենսագրական երկն է։

Նա յայտնի է նաև իր կրօնական թրդթերով և մեծ հմտութեամբ շարագրած բացմաթիւ մեկնութիւններով, որոնցից յատկապէս յիշատակենք՝ «Մեկնութիւն Արագուի» (1178թ.), «Մեկնութիւն Առակաց» և մանաւանդ «Մեկնութիւն Առակաց»։ Իր գլուխ գործոցը, ուր երաժշտական եղանակի մասին լնդգծուած են այսպիսի ուշշագրաւ տողեր. . . . Ազդութեած երաժշտական եղանակին . . . լնդգոստուցեալ զարթուցանէ զմիտու ամենեցուն առ ի տենչումն չնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ 'ի տրումութիւն' որպէս զերպոցն ձայն, յորժամ որպէս պարան է լինիցի. վասն այսուրիկ և եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն։ Անժխտելի է, որ հայոց պատարագի զարգացման պատմութիւնն ուսումնասիրելու համար Լամբրոնացու «Պատարագի մեկնութիւնը» ուրոյն արժէք է ներկայացնում, որի վերջարանում ժամանակի հայկեանքի մասին կան արժէքաւոր տեղեկութիւններ։

Աւանդ է թողել նաև ուշագրաւ ճառեր, որոնց մէջ ցոլանում է նրա հոետորական տաղանդը։ Դրանցից յայտնի է Աւտոքանութիւնը, որ խօսել է նա Հռոմեայի ժողովում՝ եկեղեցիների միութեան համար։ Այդ երկով նա քարոզում է օտարքրիստոնեաների հետ եղայրական սէր և միարանութիւն։ Ատանյն, նրա հոետորական-ճարտասանական ձիրքը փալում է «Հոգեգալստեան և Համբարձման» ներբողների մէջ։

Լամբրոնացու ստեղծագործութիւնների մէջ պատուաւոր տեղ է զրաւում նաև քաղաքական օրէնքների հաւաքածուն, որ կառուցուած է յունական օրէնքների վրայ։ Դա Կիլիկիայի Ռուբինեանց շրջանում կազմուած հայերէն առաջին օրէնքների ժողովածուն է, ինչպէս այդ ցոյց են տալիս յիշատակարանի հետեւալ տողերը։ «Զայուծայրաքաղաքաւ աւրինադրութիւնքս տառապեալ եպիսկոպոս Տարսոնի թարգմանեցի ի ծերացեալ հելլենացի մատենէ, թուին

զիե (645 + 551 = 1196) . . . քաղաքի աւրէնս ոչ զտաւ ի մէջ հայոց, ոչ յեկղեցիս և ոչ առ իշխանու։ Զեռազրի յիշատականները խոչոր արժէք են ներկայացնում այն տեսակէտից, որ նկարագրում են ժամանակակից պատմական անցքերը։

Լամբրոնացին հարստացրել է նաև իր ժամանակի թարգմանական գրականութեան էջերը։ Առաջին անգամ նա է, որ լատիներէնից հայերէն է թարգմանել կաթոլիկ եկեղեցու պարգաց զիրքը, «Թագաւորօհնէքը», «Նաւորհնէքը» և ուրիշներ։

Վաստակաւոր հոգեորականը հայ ժողովրդին նույիրել է նաև մի խումբ զարգացած, լուսաւոր աշակերտներ, որոնցից յայտնի են Ցովհաննես, Ամմուէլ և Խաչատուր գրիչները։ Վերջինս իր ուսուցչմանուան առթիւ գրել է մի նշանաւոր ողբ

Ներսէս Լամբրոնացու կենսագրականուալների համար պարտական ենք նաև Ակնայի վանքի միարան Գրիգոր Ակնացուն, որի կարձարագութիւնը կամաց է ներկայական առթիւ գրել է մի նշանաւոր ողբ։

Լամբրոնացին իր զարաշրջանի ժողովրդին ու համակրանքը վայելում է նաև իրրե երաժիշտ։ Նա օժտուած լինելով երաժշտական փալուուն ձիրքով, ձայնագրում է կրօնական բանաստեղծութիւններ՝ եկեղեցում երգելու համար։ Նրա աւանդ թողած երաժշտութիւնից յիշատակենք՝ «Համբարձաւ», «Նորոգեալ կզզիք», Որդուոց և թոռանց Արքոյն Գրիգորի Լուսուրչին, մանաւանդ նշանաւոր է Զատկուականունի օրհնութիւնը։

«Այսօր յարեալ ի մեռելոց Փեսան անման եւ Երկնաւոր. Քեզ աւետիք խնդուրեան, Հարսն ի յերկե եկեղեցի։

Կիլիկիայի հայ ժողովրդի այս վաստակաւոր վանականը վախճանւում է 45 տարեկան հասակում, Տարօնում, որտի տառնապից։

12-13րդ դԱՅ

15.

ԵՐԱԺԵՏՍԱԳԷՏ

ԳՐԻԳՈՐ ՍԱԿԻՆԸԱՅԻ

12րդ դարի վերջերին և 13րդ դարի սկզբներին Կիլիկիայի վանքում

ապրել է և ստեղծագործել մի այլ նշանաւոր մատենագիր։ Դա Գրիգոր Սկառացինն է, մշակութային գեղեցիկ ձիրքով օժտուած անձնուէր և հայրենասէր մի վանական, որ նուրբուէլ է նաև քաղաքական գործունէութեան և Ակեռայի վանքի միաբանների և հայ ժողովրդի մէջ վառ է պահել ջերմ հայրենասիրութեան ոգին։

Նա հարստացրել է նաև իր ժամանակի հայ գրականութեան էջերը։ Նրա վաստակների մէջ ուրոյն տեղ է զրաւում Ներսէս Լամբրնացու կինոսագրութիւնը, որ շարագրել է 1205 թուին։ Թողել է նաև կրօնական երկեր, որոնցից յիշատակենք և ան գովեստի պատմագրաբարյաղազս ծննդեան, սննդեան և քաղաքավարութեան և վերափոխման ամենասուրբ կուսին։ Խորագրով երկը և ածառ Քրիստոսի յարութեան վրայ, որոնք ցայտուն գաղափար են տալիս նրա գրական արուեստի էութեան և հոետորական ինքնուրոյն ձիրքի մասին։

Հայ երաժշտութեան պատմութեան մէջ ևս գաստակաւոր մատենագիրն իր համեստ է ջն ունի։ Նա է ձայնագրել «Արեգական արդարութեան» (Յովհաննու կարապետի) չարականը, որ մինչև օրս էլ երգուում է եկեղեցում և զրաւիչ է իր պարզութեամբ, նուրբ երանգաւորումով և զգացմանքի ջերմութեամբ։

13րդ ԴԱՅ

16.

ԵՐԱԺՏՏԱԳԻՏ ՅՈՎԱԿԻՓ

Որքան աղքատ են միջնադարի հայ երաժշտութեան պատմութեան մասին արձանագրուած վաւերական տուեալները, նոյնքան խօսուն են հայ ձեռագիր տաղարանների յիշատակարանները, որոնք մինչև օրս ինամքով պահպանել են մի շարք հայ երգահանների անունները, որոնք իրենց ստեղծագործութիւններով զարկ են տուել միջնադարի հայ երաժշտական արուեստին։ Այդ նշանաւոր դէմքերից մէկն է Դրագարկի դպրոցի երաժշտապետ Յովսէկը։ Չնայած հայ մատենագրութեան պատմութեան մէջ չի նկարուած նրա կերպարը, բայց իր առունը գարեր չարունակ, ամբողջ 714 երկար տարիներ, պահուել է 1241 թուին գրուած մի ձեռագիր տաղարանում։

Բնդզծինք և այն, որ այս նշանաւոր արուեստագէտի մասին նոյնիսկ չի յիշատակում երաժշտագէտ Սպիրիդոն Մելիքշեանն իր սնուրագիծ հայ երաժշտութեան պատմութեանց խորագրով երկում, չնայած, որ այդ արժէ քաւոր գրքոյից խօսում է ամենահին ժամանակներից մինչև մեր օրերի երաժշտական արուեստի պատմութեան մասին։

Վաստակաւոր երաժշտագէտի մասին կենոսագրական տեղեկութիւններ, գժբախտաբար, չկան։ Նոյնիսկ յայտնի չէ նրա ազգանունը։ Միայն 1241 թուին բեղմաւոր գրիչ Յովհաննիսի ձեռքով գրուած աերգաբան Տաղացը ձեռագրի յիշատակարանում, այն էլ շատ սեղմ, գտնում ենք որոշ տեղեկութիւններ, որոնցից պարզւում է, որ նա ապրել է Կիլիկիայում, 13րդ դարի առաջին չրչանում, Հեթումի թագաւորութեան ժամանակ և հանդիսացել է իր ժամանակի ստեղծագործող երաժշտապետներից մէկը։ Բայց մի հանդամանք էլ աւելի արժէ քաւորում է արուեստագէտի կերպարը։ Նա ո՛չ միայն օժտուած է եղել երաժշտական բարձր մշակոյթով, այլև ծանօթ լինելով եկեղեցական երաժշտութեանը, խոշոր աշխատանք է կատարել, ստեղծագործելով գլխաւորապէս զոււ հայկական ոճով, և իր ինքնուրոյն արուեստով զարկ է առւել հոգեսոր երաժշտական մշակոյթին։ Ահա թէ ինչո՞ւ նրա արտագրութիւնները միջնադարեան հոգեսոր երաժշտութեան հարցերը լուսաբանելու տեսակէտից խիստ արժէ քաւոր են։ Այդ գծով էլ նա այսօր առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում։

Այս տաղանդաւոր երաժշտագէտի յայտնութեան համար պարտական ենք նախ Փարիզի Նախիկին կայսերական մատենագրաբաննի թիւ 50 (հին ցուցակով) ձեռագիր Տաղարաննին։ Դա կրօնական նիւթերը պարունակող ամենահին տաղարաններից մէկն է, որի յիշատակարանում կարգում ենք հայկական երաժշտութեան պատմութեան համար առանձին արժէք ունեցող հետևեալ տողերը։ Ակատարեցաւ երգաբանն Տաղաց ձեռամբ Յոհաննիսի յետին և յոզնամեղի ի թուականիս հայոց ԱՃՂ (690 + 551 = 1241), ի վասն մեծ ուխտի և հռչակաւոր անապատա Դրագարկ կոչեցեալ, ի թագաւորակար Դրագարկ կոչեցեալ, ի թագաւորակար Դրագարկ կոչեցեալ։

ւորութեանն Հեթմոյ՝ որդոյ կոստանդեա: Եւ է առաջնորդ ուխտիս մեծն Բասիլիոս՝ եղբայր թագաւորին Հեթմոյ . . . գտեալ ազէկ աւրինակ յոյժ գեղեցիկ զան միոյ երաժշտապետի Յուսէփ կոչեալ և կարի հասու ամենայն իմաստից երաժշտից, մինչև ի բաւանդակն, որ(ոյ) յաւուրս ոչ գտանի հանգոյն . . . Յիշեսջիք ի տէր, և զՅուսէփ երաժշտապետ, որ զաւրինակն անձանձիր շնորհաց»:

Հ. Բարսեղ Վրդ. Սարգսեանի խմբագրած «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» բանասիրական արժէքաւոր գրքի Բ. հատուրում կարգում ենք, որ Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան նշանաւոր հայագէտ, լեզուաբան և բանաստեղծ Հ. Արսէն Բագրատունին (1790—1866) Փարիզի Ազգ. Մատենադարանի №. 50 և այլ ձեռագրերի վրայից 1824—5 թուերին ընդօրինակելով կազմել է Վենետիկի Միսիթարեանների Մատենադարանի №. 294 ձեռագիրը, որ կոչում է «Հաւաքումն բանից նախնեաց Ա.», որի մէջ է գտնուում մի տաղարան:

Նշանակալից է այն, որ 1241 թուին տաղարանը գրող Յովհաննէս զրիչը ձեռագրի յիշատակարանում ընթերցողներին թախանում է՝ յիշել և կարի հասու ամենայն իմաստից երաժշտից . . . երսելի երաժշտապետն Յովսէփ, որ միշտ իր կոչման բարձրութեան վրայ կանգնած՝ ընդգրկել է մէկ նպատակ նպաստել ժողովրդի գեղարուեստական դաստիարակութեանը:

Յովսէփ երաժշտապետի մասին կարգանք նաև Վիեննայի Միսիթարեան գիտնական վանականներից Հ. Յակոբոս Տաշեանի զրած հետեւալ տողերը. « . . . Մեր ձեռագիրն առաջին օրինակներէն ըլլալու է (1220—50) տարեաց մէջ»: Ճիշդ այս միջոցին կը յիշուի համբաւաւոր Յովսէփի երաժշտապետ Դրազարկի վանաց, որուն զրած մէկ գանձարանը կը գովուի 1241 Յիշատակարանի մը մէջ (Զեռագիր Վիեննայի Միսիթարեան, № 166):

Ի՞նչ են ընդգծում, սակայն, 1241 թուին գրուած պատմական ձեռագրի յիշատակարանի տողերը: — Այն, որ՝

1) Երաժշտապետ Յովսէփն ապրել է և ստեղծագործել 13րդ դարի առաջին շրջանում:

2) Արուեստագէտն ունեցել է երա-

ժշտական բարձրագոյն կրթութիւն և իր ստեղծագործական հարուստ յոյզերով, նուրբ ճաշտկով և խոր ապրումներով հանգիստացել է իր դարաշրջանի նշանաւոր երաժշտագէտը:

3) Իրեւ ստեղծագործող՝ նա զբաղուել է հայկական եղանակների ձայնագրութեամբ և որպէս հմուտ և նուրբ արուեստագէտ երաժիշտ՝ մեծ համբաւ է վայելել ժամանակակիցների շրջանում, ինչպէս այդ վկայում են հետևեալ տողերը. «Եւ կարի հասու ամենայն իմաստից երաժշտից մինչև ի բաւանդակն, որ(ոյ) յաւուրն ոչ գտանի հանգոյն»:

4) Նա մէկն է 13րդ դարի այն լաւագոյն երաժիշտներից, որն իր կեանքն ամբողջապէս նուրիբել է հայ եկեղեցական երաժշտութեան վերելքին:

Արձանագրենք մի կարևոր երեսոյթ ևս վենետիկի Միսիթարեան Միաբանութեան մշակներից Հ. Արսէն Բագրատունին վկայում է, որ վանքի Մատենադարանում գտնուած ձեռագրում, երաժշտապետ Յովսէփի մասին զրուած տողերի զիմաց՝ լուսանցքում աւելացուած է սպարսիկ ձայն, ասորի ձայնները պարսկական և ասորական եղանակներ են, որոնցով զրացուել է երաժշտապետը: Այս տողերը խիստ ուշագրաւ են և ընդգծում են մի էական հանգամանք, որ երաժիշտ Յովսէփը Դրազարկի պատմական վանքում զրացուել է ոչ միայն հայկան եղանակների ձայնագրութեամբ, այլև օգտագործել է պարսկական և ասորական եղանակների ձայները, մի երեսոյթ, որը բացառիկ արժէք է ներկայացնում և առանձին կարեռութիւն ստանում հայմիջնադարեան երաժշտութեան զարգացման հարցերը լուսաբանելու և, որ էականն է, պարսկական, ասորական և հայկական երաժշտապետներ մեկնարաններու տեսակէտից:

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԼՆ

(Շարունակելի՝ 9)



ՄԱՏԵՎԱԳՐԱԿԱՆ

(ԽԵԿ) ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԱԿՈՒՐԱՆՑԻ

Բ. ԳԱՆՁԵՐ

= 1 =

ԳԱՆՁ ՎԵՅ ԱՒՌԻՐ ԾՆՆԴԵԱՆ

Ա.

Յանեղական լուսոյն խոնարհեալ,
յերկնից իջեալ եւ առ մեզ եկեալ,
բանդ որ ընդ Հաւը յմրկրի երեւեալ,
եւ ի Կուսէն մարմին ըզգեցեալ,
Աստուած եւ մարդ նոր միաւորեալ,
մարդ եւ Աստուած անշփոթ միացեալ,
ի Բեթղանէմ ի յայրին ծընեալ,
խանձարրապատ ի մըսուր եղեալ,
յարեւեյեան մոգուցըն պատուեալ,
ոսկի, կընդրուկ եւ զըմուռ բերեալ.
Բարեխսաւութեամբ մաւը քո եւ Կուսի,
զմերս ընկալցիս պատարագ բանի.
Աղաչեմք :

Ը.

Ողորմեցար ծեռաց քոց ստեղծեալ,
ազգի մարդկան, մեղաւը վարատեալ,
զիաւտ քո յերկինս անմոլար թողեալ,
մոլորելոցս ի խընդիր եկեալ,
զոր եւ զբտեալ եւ ի յուս բարձեալ,
եւ յերկնային փարախըն մուծեալ,
ըզնրագ մարմնոյդ լուսով քո վառեալ,
եւ անմաքուր տանս աւել ածեալ.
Գըտեր զպատկեր քո նորացուցեալ,
եւ երկնայնոցըն հաղորդս արարեալ:
Բար.

Բնագիր Ծ = Զեռ. Ա. Յ. Թ. 135:
Հմմ. Շ = Զեռ. Ա. Յ. Թ. 278, Գանձ-
գիրք, ԺԵ. գար: Նոյնը կը գտնուի ըստ
Conybeareի Յուցակին 1411-2 թուին գըր-
ուած Գանձգրքի մը, յեղնագրուած՝

Գանձ Յովհաննու Թէկուրացւոյ (էջ 113թ 17):
Բ. - 2. - Վարատեալ, վայր անկեռլ, Շ:
6. - մուծեալ, տածեալ, Շ:
7. - վառեալ, լուցեալ, Շ:
9. - զըմուր, զըտեալ, Շ:

Գ.

Վերապատուեալդ ի հրաբուն զաւրաց ,
անլըռելի ծայնիւ սրբասաց .
ի սկըզբանէ Բանդ Հաւը առ Աստուած ,
եղեր լըրումըն տեսանողաց .
զգեցար ըգկերպս հողեղինաց ,
նրկարագիր Հաւըզդ եւ լոյս փառաց .
զոր աւրհնութիւն ըստ կարի մըտաց ,
քեզ մատուցուք Տէք ըստ արժանեաց .
Փառք պատիւ և երկրպագութիւն ,
հացիդ կենաց եւ մեր փրրկանաց :
Բար .

Դ.

Այսաւը երկինք ի վերուստ ցընծան ,
եւ լուսաւորքն պայծառացան .
այսաւը երկիրըս նորոգեցան ,
բանզի որումըն չարին բարձան .
այսաւը խաւարըն կռապաշութեան ,
հալածեցան եւ անհետ կորեան .
ցաւք եւ անէծք , և երկունք ծնընդեան ,
այսաւը բարձան ծնընդեամբ կուսական .
այսաւը հըրեշտակը ընդ որդւոց մարդկան ,
փառաւորեն զԱստուած յաւիտեան :
Բար .

Ե.

Նոր աւրհնութիւն նորոգ բազմացաւ ,
նոր արքային որ այսաւը ծընսաւ .
անտանելին ի մարմնի տարաւ ,
եւ անսահմանըն սահմանեցաւ .
անժամանակն ընդ ժամանակաւ ,
եւ շինաւորցն Աստուած մանկացաւ .
հուրն ի խըռիւ եղեալ ոչ կիզաւ ,
եւ մորենի չկոյսն անուանեցաւ .
զի ի սկըզբան մարդըն ցանկացաւ
աստուածանալ , եւ անդ ոչ հասաւ .
իսկ արարին եկեալ մարդացաւ ,
վասն այնորիկ մարդն աստուածացաւ :
Բար .

Գ. — 1. — հրաբուն , հրեղէն , Շ :

2. — անլըռելի , անբաւելի , Շ :

3. — Հաւը առ , առ Հաւը , Շ :

6. — նըկարագիրըդ Հաւը քո փա-

ռաց , Շ :

8. — մատուցուք , մատուք , Մ :

7. — 8. — բարձան , լուծան , Շ :

9. — այսաւը , որով , Շ :

6. — 8. — մորենի , մաւրենի , Մ . — ան-

ռաց , Շ : ուանեցաւ , կոչեցաւ , Շ :

Զ.

Էն միշտ յէջն, միշտ Հաւրէն ծընեալ,
կերպիւ մարդկան յերկրի երեւեալ.
որպէս զանձրեւ ի գեղման իջեալ,
քանզի Դաւիթ այսպէս վըկայեալ.
Կոյսըն յըղացեալ, զՄանուէլ ծընեալ,
եւ ի յերկրի ընդ մարդկան շըրջեալ.
վէմն ի լեռնէն անձնոյն հատեալ,
եւ Բելիար եղեւ խորտակեալ.
զմարգարէիցըն կանխաւ ճառեալ,
այսաւը զըուրին եկեալ կատարեալ.
որ էր ընդ Հաւը ի յաթոռ բազմեալ,
եւ ընդ Հոգւոյն յաւիտեանս աւրհնեալ:
Ցիշ. : Եւ եւս. : Զանձ. :

Է.

Սուրբ սրբուհի մայրդ անհարօնացեալ,
ի հրակերպից դասուցն երանեալ.
սափոր ոսկի, գաւազան ծաղկեալ,
տախտակ բանին, մատամբ ծեռագրեալ.
լեառըն խընկեալ, եւ հովիտ ծաղկեալ,
դուռըն փակեալ, եւ աղբեւը կընթեալ.
աթոռ կազմեալ, ուր արքայն բազմեալ,
ամպ լուսափայլ, ցող բաղցրածաւալ.
զերգը մատոյ, զնըւէրս աղերսեալ,
առ Բանն Աստուած ի քէն մարմնացեալ.
լեր բարեխաւս բանիդ մարդացեալ,
տեսլեան իւրոյ մեզ արժանանալ. (*)
եւ ի զալուստն իւր սուրբ հանդերծեալ,
ի յանդրանկաց դասըն միանալ:
Ող. :

= 2 =

ԳԱՆՉ ՀԻՆԳ ԱԽՈՒՐ ՀՈԳՈՅ ԳԱԼՍՏԵԱՆ

Ա.

Յաւէտ իսկապէս, ընդ Հաւը միապէս, եւ աստուածապէս.
Ելումն էապէս, անըսպառապէս, եւ անհատապէս.

Զ. — 6. — եւ, որ, Շ:

է. — 1. — սուրբ, չունի, Շ:

4. — ձեռագրեալ, ձեսպրեալ, Շ:

11. — բանիդ, բանին, Շ:

14. — յանդրանկաց, յարդարոց, Շ:

(*) Վերջին երկու տողերէն առաջ Շ
օրինակը ունի յաւելուածաբար հետեւեալը.

եւ զստացող այս զանձիս յիշեալ,

Տէր Յովաննէսն որ ես զսա կազմեալ.

Բնագիր Մ. Հմմա. Դ. = Զեռ. Ա. Յ.

թ. 2011, Գանձգիրք, թէ. 1460, բուրգիր

լաւ. Նոյնը կը գտնուի նաև Ա. Ղազարու

1394 թուականով մէկ Գանձարանին մէջ:

Վերնագիր. Յովանէս Թըլգուրանցոյ

ասացեալ վասն Հոգոյն Ա. Դալըստեանն, Դ:

ինքնիշխանապէս, հրզօրեղապէս, եւ նոյն տիրապէս.
Որդոյ նմանապէս, փառաւորապէս, եւ արարչապէս.
ինքնազաւրապէս, կատարելապէս, բանաւորապէս.
որոշելապէս, անբաժանապէս, միաստուածապէս.
անորոշապէս, անգիտելապէս, եւ անյեղապէս.
ահա կեցո զմեզ, Տէր, եւ արդարացո, Հոգի Աստուծոյ:
Ա. . . . :

❖.

Որ ի ջուրս գոլով, ստեղծագործելով, ըզբեզ յայտնելով.
զիրեշտական առնելով, դասիւ եւ կարզով, շնորհրս բաշխելով.
զերկիր ստեղծուածով, բուսով եւ տրնկով, խոտով բանջարով.
զերկինս երկնայնով, զարդարեալ գեղով, լուսնով և արեւով.
ըզծովըս լընլով, լողական գեռնով, մեծամեծ կիտով.
զաւդս օդականով, զարդարեալ շըբով, թըռչուն հաւերով.
զազանս անամնով, եւ չորքուտանով, սողունս առնելով.
զԱդամ ստեղծելով, ի տիպ առնելով, քեզ նըման գոլով.
յԱդամ փըչլով, զոր ստեղծեալ ծեռով, հոգով կենդանով.
պարզեւըս տալով, նոխ ցուցանելով, երկիր տիրելով:
Ահա . . . :

❖.

Վեհ երեւելով, Ադամ իւր պատուվ, զերազանց գոլով.
իմաստ շնորհելով, բահանայելով, թագաւորելով.
ի դրախտին զնելով, բազմախիտ ծառով, կանաչ տերեւով.
զանազան պրտով, անթառամ գունով, եւ անուշ հոտով.
պատուիրան տալով, բազմացն ուտելով, միոյն չուտելով.
զոր ոչ պահելով, մերկացաւ փութով, ծածկեալ թըզենով.
զնոյն այսաւր զոլով, բո պայծառ լուսով, նոր զարդարելով:
Ահա . . . :

❖.

Ազբեր գիտութեան, պարզեւ բարութեան, տուրք ողորմութեան.
Հոգիդ զաւրութեան, եւ իմաստութեան, հոգի գիտութեան.
հոգի խորհըրդեան, հանճար իմացման, առաջնորդական.
երկիւղածութեան, աստուածպաշտութեան^{իւ} յաջողութեան,
Քոյին զաւրութեամբ ջուրք բաժանեցան, ճանապարհը բացան.
մատըն հայրական, աստուածայնըման, ստանաս զամենայն.
յորժամ եւ յորքան ախորժես զարժանն տաս անհատական.
բահանայական, եաւթըն խորհըրդեան, եկեղեցական:
Ահա . . . :

❖.

Նոր ծայնիւ գոչեալ, նոր երգս յաւրինեալ, նուազիւ պար առեալ.
Հոգւոյդ պարզեւեալ, որ այսաւր իջեալ, յառաքեալս հանգեալ.
զնոսա մըկըբտեալ, մարմնով հրայգինեալ, եւ հոգով մաքրեալ.

Ա. — 4. — . . . և արարչապէս, փառաւ
որապէս, Ղ.:

5. — . . . բաւականապէս, Ղ.:

Դ. — 4. — անոյշ, Ղ.:

Դ. — 6. — ստանա, Մ.:

Ե. — 1. — նվազիւ, Մ.:

զորդոյ խոստացեալ, եւ զհաւը պարզեւեալ, քո տէր կատարեալ.
ծիր առատ հեղեալ, պարզեւը բաշխեալ, լեզուս բաժանեալ:
Ահա . . . :

Զ.

Նորա որք տեսեալ, որք անդ պատրաստեալ, յաշխարհաց եկեալ.
Պարթեւքըն սարսեալ, Մարքն զարմացեալ, Դամիրք հիացեալ.
Կրեստացիք լըւեալ, Արարիք սաքրեալ, և այլք պարաւանդեալ.
զոր Պետրոս ելեալ, զԵովիէլ բերեալ, զգիրն յայտ արարեալ.
որում հաւանեալ, եւ հաւատացեալ, երեք հազար լեալ.
եւս առաւելեալ, թիւ քան զթիւ անցեալ, անբաւս երեւեալ:
Ահա . . . :

Է.

Նոր նորոգաւղին, Հոգւոյ ճշմարտին, փառս տացուք նըմին,
որ ընդ հրեշտակին, յաւետին կուսին, յիջանել բանին.
կազմոյ տանարին, լինէր էակցին, ստեղծանէր մարմին.
առ Յորդանանին, աղաւնայկերպին, հանգչէր առ Որդին.
վասն որոյ տանջին, որք հայհոյեցին, զլստուած սուրբ Հոգին.
եւ ոչ ունիցին նորայ թողութիւն աստ և յաւիտենին:
Ահա . . . :

Ը.

Եիդ երգեցուք, զեդ փառատրեսցուք, յեէդ խնդրեսցուք.
հոգւով մաքրեսցուք, մարմնով սըրբեսցուք, զի արժանասցուք.
ըզմեղըս թողցուք Յեւ անարգեսցուք, երես դարձուսցուք.
յԱստուած դիմեսցուք, բարիս գործեսցուք, աղօթս արասցուք.
զտեարըս պաշտեսցուք, զծընողս պատուեսցուք, զիրեար սիրեսցուք.
ըեզ ծառայեսցուք, սպասաւորեսցուք, երկըրպագեսցուք.
զբեզ դաւանեսցուք, խոստովանեսցուք, եւ հաւատասցուք:
շնորհիւ քո լըցցուք, զմեզ կանոնեսցուք, զայլըս խրատեսցուք:
Յիշ.: Եւ Եւս.: Զան.:

Թ.

Սուրբ Կոյս Մարիամ, վարդատիպ փայլմամք, ծաղիկ անթառամ.
ի քէն աղերսամ, փափաքեալ ցանկամ, բաղծանաւք տարփամ.
հոգովըս տենչամ, սարսեմ եւ դողամ, զի արժանանամ.
հոգով ժըրանամ, մարմնով զգաստանամ, եւ կարողանամ.
ի մեղաց դառնամ, արտասուեմ եւ լամ, զի արդարանամ.
սըրտիւ հաւատամ, առ քեզ դիմեալ գամ, մայրըդ բարեխնամ.
զի ի միւսանգամ, զալըստեանն յայնծամ, նորոգեալ ցընծամ:
Աղ. . . . :


Ն. ԵՊԱ. ՆՇՎԱԿԱՆ

(15)

Զ. — 1. — . . . որք անդ պատահեալ . . . , Ղ. : կ. — Զունի, Ղ. :

ՃԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(1891 - 1956)



Երուսաղէմի վանական շրջանակը խոռոշիկ վիշտով իմացաւ անակնկալ մահը Շահան Պէրպէրեանի, որ տարիներու ուսուցչական բեղուն վաստակ մը ունեցած է երուսաղէմի ժառ. Վարժարանին եւ Էնծայարանին մէջ: Ս. Սթոռոյս ներկայ Միարանութեան կարեւոր մէկ մասը աշակերտած է իրեն: Երկար տարիներ, անիկա եղած էր նաև Սիոնի կարեւոր աշխատակիցներէն իրեն պաշտօնակից՝ հանգուցեալ մեծատաղանդ Յ. Օշականի հետ: Հոկտ. 27ի Շաքաթ օրը Միարանութիւնը կատարեց իրեն համար հանդիսաւոր հոգեհանգիստ Ս. Յակորեանց Տաճարին մէջ:

Սիոն եւ Միարան Հայրեր իրենց սուզը եւ վիշտը կը միացնին հանգուցեալի ընտանիքն կրած մեծ վիշտին: Աղօթող ենք իր յաւիտենական երանութեան համար:

Երբ կը ծեռնարկէինք վերակրչել իր բարի յիշատակը եւ ակնարկ մը նետել իր ազգա-

յին ծառայութեան դաշտին մէջ կատարած գրեթէ 50 տարուան ուսուցչական վաստակին վրայ, երուսաղէմ մնացած իր թուղթերուն մէջէն կը գտննելը երկու գրեթէ մաշած թղթիկներ: «Բեւեռազիրը» բակութեան վերջ ստուգուեցաւ որ իր մանկութեան եւ կազմութեան տարիներու կենսագրական տրուագիծ մըն էր:

Յարմար սեպեցինք նախ հրատարակել այդ թղթիկներէն միոյն պարունակութիւնը, յառաջիկային ծգելով մեր առաջադրած գնահատանքը մեծանուն ուսուցիչն եւ սիրելի Շահանին:

Հետեւեալն է վերեւ ակնարկուած թղթիկին պարունակութիւնը, զրուած հանգուցեալի մանրատառ եւ յոյժ դժուարընթեռնի ծեռագրով, երբ «տունի մը մէջ բանտարկուած» էր, խուսափելով մահէն որուն առաջնորդուեցան Պոլսահայ մտաւորականները, Մեծ Եղեռնին:

ԿԵԱՆՔԻՍ ԲԱՇԽՈՒՄԸ

•

Ամէն անգամ որ կեանքը կը թռւի մօտենալ իր վախճանին, երբ պատահարները կարծիս այնպէս մը կ'առաջնորդեն լինելութիւնը որ ան կը թռւի պահանջել կեանքէդ զոհութի . . . ինքնարեարար և բնազօրէն կ'անդրադառնաս ապրած օրերուդ ամրողջութեան վրայ, կարծիս — որքան ալ անոնք ներկայացնես կիոկատար բան մը, կամ նոյնիսկ ներածութիւն մը, ձանուցում մը միայն գործի մը — այդ համազրական նկարումովը կարելու համար անոնցմէ գեղարուեստի գործի մը պէս ամրողջ մը, բանաստեղծութեան մը պէս կամ զէթ նուպէրթի չվերջացուցուած սցմֆոնի ին պէս բան մը: Կարծեմ անձնապահապահման նազգն է մինչեւ ապագային մէջ սուսերածգած իր ճիպը, զա՞ւր ճիպ:

Թանի մը օրերէ ի վեր, իրաւ ալ, զոյութեանս վրայ է խնդիրը, ու զինուօր չերթալու, աքսոր ալ թերես չերթալու համար փախուտական եմ, տունի մը մէջ պահուըտած . . . Աւ բնազգօրէն կ'անդրադառնամ կեանքիս, մանկութեանս ու պատանութեանս, զորս այնչափ կը սիրեմ . . . ու օրքան պիտի ուզէի կարենալ սա օրերու մէջ զրել անոնց պատմութիւնը. թռւզթի վրայ ճշգագրել յիշատակներս: Որքան պիտի ուզէի ներազգել այն արշալոյսը որ տարիներու մէջ եղաւ իմ կեանքիս նախածանուցումը . . . թերես ի զուր ափսոսալու համար կամ ափսոսալ տալու համար այդ կեանքին ջնջման պարագային՝ անոր ապագայ կերելիսութիւններուն վրայ, որոնք եկած պիտի չըլլան:

Տունի մը մէջ բանապարկուած եմ, բարեախտաբար սենեակ մը կայ ուր կրնամքաշուիլ և աշխատախիլ: Աւ աւելի բարեբախտաբար՝ այդ սենեակը ունի պատուհաններ որ կը գրկեն լայն հորիզոն մը, գեղեցիկ համայնապատկեր մը որ հոգիս հրճուանք կը ներշնչէ ու կ'ամոռքէ ամենէն սրտածըմլիկ վիճակներու: Տեսարանին առաջին մակարդակին վրայ յոյներու և հայերու գեղեզմանատունն է. ճերմակ, անկանոն ու տիսուր խաչերով և քարերով գերեզմանատուն մը, որուն քանի մը ծառերը չեն կըր-

նար մեղմացնել լքման ու անհրապոյր մահուան նիւթին յայտնութեամբը տիսուր և տափակ մահուան macabre տպաւորութիւնը, որ կը պմզացնէ զիս, բայց տեղի ետելը՝ ընդարձակ հողերը, բուսականութեամբ հարուստ պարտէզները — որոնց ծառերուն մէջ աշունը հիանալի երանգներ նիտած է — և կղզիները իրենց կը քաշեն նայուած քո, զայն միսիթարելու համար, ինչպէս հորիզոնին լուրթ լեռները, որ ծավին ու երկինքին կապոյտին հետ երանգներու նուրբ գանազանութիւն մը կը յօրինեն, կը զրաւեն քեզ, երազանք դնելու համար հոգիրիզ ու աչքերուդ մէջ:

Ու այս տեսարանը այնքան զրաւող է որ գերեզմանատունին հետ մտքիս ներկայացող ու ապրած պարագաներէս քաջաւերուող տրաում զգացումը եա կը մզուի ու թերես նոյնիոկ իր մէջ կը բերէ կեանքի բուրումները, որոնք կը չըջապատին զիս, քանի աչքերս կը խորասուզուին հեռուի տեսարաններուն երանգներուն մէջ և քանի յիշատակներս մանկութեանս և պատանութեանս տարիներուն մէջ կը փոխազրին զիս:

Երէկ առաւօտ զբաղեցայ իւրաքանչիւր մէկ բառով, օրագրելու բոլոր լիշտակներս, որոնք կը մնան տակաւին մտքիս մէջ մանկութենէս, այսպէս երբ կը պատրաստուի ըլլալ և իսկ իմ կենսագիրս, կը մտածէի կեանքիս զլիսաւոր բաժանումներուն վրայ: Կեանք մը կը բաժնուի՞ մասերու, ինչպէս կ'ընեն կենսագիրները: Պիտի բերուէնք խորինելու թէ այդ բոլոր բաժանումները անհիմ են և յատակութեան պահանջքն է որ պատմագրողին կատարել կուտայ զանոնք: Բայց երբ ևս իսկ կ'անդրադառնամ այն ներկայացման զոր ունիմ մտքիս մէջ՝ իմ իսկ կեանքիս մտօին, կը զիտեմ որ ան ինձ կը թռւի գլխաւոր բաժանումներ ունենալ: Անչուշտ երբ չատ խորութեամբ նայինք՝ կեանքը ի ներքոյ միէ. բայց բոլորզին արտաքին կրնան չըլլալ բաժանումները և բաւական՝ հիմնաւորեալ երբ ենթական իսկ է որ իրական կը զգայ զանոնք:

Երբ կ'անդրադառնամ այսպէս իմ կեանքիս վրայ, ան ինձ կը ներկայանայ իբրև շարայրաւոմ մը, որ ունի օրոշ մասեր, իբրև ամբողջ մը ուր կարելի է որոշել զւտ-

խաւոր քանի մը շրջաններ, գոյնով տարբեր, և կարծես տարբեր անկիւններ կան, որոնցմէ զերջ ուրիշ նկարագիր մը ստացած է կեանքը, կամ դէմ ուրիշ կարգի իրողութիւններով լեցուն եղած է, հակառակ որ զանոնք ոգեսորող իրականութիւնը մինչոյն հոգիէն կը բջիփ ու մինոյն դynamique տօք ունի: Ու քիչ մը աւելի դիտելով կը տեսնեմ որ կեանքի շրջանակն է որ կը կազմէ զիսաւոր տարբերութիւնը այդ շրջաններուն, և այդ շրջանակները ուրիշ բան չեն բայց եթէ ճամբարդութիւններ, որոնք տեղափոխած են զիս և փօխած այն տեղը ուր կը սահէր կեանքս: Այնպէս որ քաղողը մինոյն անձն է, բայց ճամբան փօխուած է: Ու շատ բան կ'ազգուի այդ ճամբային պարունակութենէն և յիշատակները կը ցոլացնեն իրենց մէջ այդ ճամբուն պատկերներէն, անոնց երանգէն և անոնց յստակ զգացումէն:

Ա. — Մատքիս մէջ իրեն առաջին մանկութեան շրջան մը կը ներկայանայ այն զոր ապրած եմ ծննդավայրիս՝ Ակիւտարի մէջ, կեանքիս առաջին վից տարիններուն, 1891էն մինչև 1896ի աշունը: Կեանքիս այդ առաջին մասի շրջանակը, հայրենի զպրոցը, իր պարտէզը, և անոր կից՝ մեր կողմէ բնակուած ճերմակ, քարաշէն տունն է: Ինք զինքս կը տեսնեմ հոն պղտիկ տղայ մը, երկար մազերով, անհոգ և ուրախ կեանքով, որ կը խաղար իր քրոջը և եղբօրը հետ տարօրինակ խաղեր, որուն հետ կ'իշնային դպրոցին տղաքը որոնցմէ քիչ մը կը խորչէր և որ ունէր բարի բնութիւն մը, բայց երեմն զայրացկոտ, որ քարոզ կուտար և որ կ'ազգուէր այն պատմութիւններէն և երգերէն զորս կ'ըսէր ու կ'երգէր Ռիսաննա տատան: Այդ շրջանէն զերջը կը ծնի Նուրհանը. կը պատահին 1895ի և 1896ի դէպքերը, որոնք տեսակ մը արձագանգ ձգած են մէջս, վտանգաւոր ու միանգամայն քաշող բանի մը: Հեշտալի մանկութիւնն էր այդ, անհոգ, անվիշտ, երջանիկ միջավայրի մը մէջ, որ կ'ընդունէր կաղանգներու այցելութիւնը, որ կը վայելէր երջանիկ ու պատելի ծնողներու նուէրները այդ մանկութեան տունին մէջ որուն հորիզոնին սահմանափակութիւնը արգելք չէր այն շատ մը հրապոյրներուն որ զինքը լեցնէին . . . : Հաւքի կղզին կտարառուած

օդափոխութիւն մը և 1896ի տագնապալի օրերը կը վերջացնեն այս առաջին մանկութիւնս:

Բ. — Այս շրջանին կը յաջորդէ երկրորդ շրջան մը ուր կը սկսի բուն տղայութիւնս: Ժընէփի շրջանն է այդ. 1896էն մինչև 1898ի ամառը. Պոլիսէն մեկնուժնիս և Ժընէփ հաստատուելնիս ընտանեօք կը բանան այս երկրորդ մասը կեանքիս: զարձեալ տղայութիւն: Բայց արգէն չկայ այն առաջին շրջանին բացարձակ անհոգութիւնը, անխառն երջանկութիւնը: Եւրոպան կ'ազդէ վրաս, բանալով միտքս, զիս աւելի ուշագիր զարձնելով շուրջիս իրերուն, ու մանաւանդ ծնողացս հոգերը և վիշտերը արդէն պղտիկ մը լրջութիւն, խոհականութիւն առաջ կը բերեն մէջս: Ժընէփը, պատուած այնտեղի յաճախած դպրոցը, այնտեղի իրերը, թատրոնները, սրահները, օտարութիւնը, Bastion պարտէզը համարսարանով, Ժընէփի լիճը, լեռները, կարագը ու կարգանդակները, կարգալ սորվիլս ու ընտանեկան վիշտերը, Նուրհանին հիւանդութիւնը: Այս ամէնը կը լեցնեն այդ երկու տարին: Առաջին հետաքրքրութիւնս կը փօխուի բեղուն կեանքի մը, որուն մէջ կը կազմուիմ և որ ի վերջոյ տեղի կուտայ անհուն տենչանքի մը՝ վերադառնալու դէպի ծննդավայրս. և ա'լ երազներ են անվիշտ, ընտանեօք կամ Ծննդիկին հետ խօսուած, և որոնք տենչալ կուտան Ակիւտարին ինչպէս երկրորդ երկնքի մը: Վերջապէս կը մինինք Ժընէփէն:

Գ. — Ու կը սկսի կեանքիս երրորդ շրջանը, որ իր մէջ կ'ենդգրէկ Պէրպէրեանի (Վարժարան) մէջ անցուցած ամբողջ կեանքըս, մինչև շրջանաւարտութիւնս, և անհէյետույ ալ մինչև Բարիզ մեկնումս իր համալսարանական ուսանող: Տղայութեան վերջին մասը և ամբողջ պատանութիւնս կ'ամփոփուի այս շրջանին մէջ որ կ'երթաւ! 1898ի ամառէն մինչև 1908ի աշունը, ամբողջ տասը տարիներ, որոնց մէջ պատահած էր անկանքիս էն զլիստուոր իրողութիւնները, ամենէն մէծ գժրախտութիւններէն սկսեալ մինչև ամենաէկան կազմաւորումները բնութեանս: Նախ՝ տղայութիւնս, իրէկան հակումներովը, որոնք կ'արտայտուին խաղերուս մէջ, կրօնական հակումը և զինուորական հակումը: Կրօնական հա-

ԵՐՈՒՍԱԿԵՄԻ ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԺՄԱՆ ՃԱՄԲՈՒ ՄԵԶ

Հայ մամուլը իր ժամանակին արձագանք տուած վերջին Երուսաղեմի մեջ տեղի ունեցող անցուդարձերուն: Ս. Աբովուս ալ երից նաղորդագրութիւն զնաց հայ թերերուն: Այսուհանգերձ անհրաժեշտ էր նկատենի պատճենարկերին մեջ եւս անդրադառնալ այս տաղմապին, թէ՝ պատմութեան համար, թէ՝ հաստատելու թերերու մեջ բառածներէն մեծ մասին օսուգութիւնը, թէ՝ ներելու համար այդ առքի եղած կարգ մը սխալ վերագրութիւնը, սխալ հաւասարութիւնը եւ մեղաւոր վերապահութեները:

Ն Ա Խ Ը Ն Թ Ա Ց Ը

Համաձայն Երուսաղեմի հայոց վաճեմի Միաբանական Աւասի Կ-Հ-Հ-Հ-Ի-Յ, երբ պատրիարք Վախինանի Միաբանութիւնը կ'ընտէ Տեղապահն մը: Տեղապահն զիսաւոր, գրերէ միակ պարտականութիւնն է, պատրիարքի Վախինանունէն 40 օրեր վերջ Միաբանութիւնը ժողովի հրաւիրել նոր պատրիարքի ընտրութեան համար:

Երուսաղեմի հայոց վերջին պատրիարքի, Կիւրեղ Բ. ի վախինանունէն յետոյ, 1949ին,

կումը, որ կը խառնուի տղայութեան վշտիս հետ, երբ մայրս կը մեռնի հազիւ ինը տարեկանս ոտնակոխած: Յիշոյ, տասնըմէկէն տասներկու տարեկաննիս կը գոցուի պատանութիւնս, որ կը ծանուցանէ ինք զինքը խարունկ և ուժով սիրով մը որ զիս կը կապէ ընկերոջ մը: Տասներեք տարեկաննիս կը ծնի մէջս գրական հակումը: Կ'երազեմ ըլլալ քերթող և գրող: Տասնըչորս տարեկաննիս, Եւրոպա երթալու փափաքիս հետ կը ծնի արգէնս մէջս իմաստափառութեան հակում, որ հետզհետէ պիտի զօրանայ: Նոր «Դարձեր» և երաժշտութիւնը, իմաստափառութեան հետ, կը լիցնին կեանքս և իր երազը, մինչև շրջանաւարտութիւնս — 1905, Յուլիս — երբ տասնըմինքս կէս տարեկան եմ: Յաջորդ տարին ուսուցիչ եմ: ու կը յիշեմ մեծ աղէուը կեանքս — հօրս մահը: Իր իմաստափ-

Միաբանութիւնը Տեղապահ ընտրեց նդիքէ Վ. Ր. Տերեկեանը:

Նորմնիւր Տեղապահը փոխանակ պատրիարքի մահէն 40 օրեր յետոյ Միաբանական Ընդհանուր գումարելու, լման եօր տարիներ ձգձգեց պատրիարքական ընտրութիւնը զանազան պատրուակներով:

Միաբանութիւն անդամներուն գրերէ կէսը այս շրջանին կը գտնուէր Երաւաղիմէն դուրս, նույրուած նկեղեցական ծառայութեան սփիւրէի զանազան գաղութներու մեջ: Խոկ Արուին մեջ մնացողներու մեծամասնութիւնը կամ խարուելով Տեղապահի յերիւրած պատրուակներէն, կամ մեղակցելով Տեղապահին չէ կցած պատրիարքական ընտրութիւն պահանջնել: Գրերէ մնայուն պատճենի վերածուած Տեղապահութեան եօր տարիներու շրջանին, վանքը ծանրօրէն տուժեց հոգեւորական, բարոյական, իմացական եւ մատեական մարգերուն մեջ, Տեղապահին անպատճանատու եւ անփոյր պատճենավարութեան եւ սանձարձակ կենցաղին հետեւներով:

1955ին, Տիրան Արենապ. Ներայիան, Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան քեմի

բական դասերը կը ստանձնեմ՝ տասնըմին տարեկան հասակիս մէջ, իր մահուընէն քանի մը շաբաթ յետոյ: 1907—1908 տարին ալ կ'անցընէմ ուսուցչութեամբ, մինչ չէ որ 1908 աշունին կը մեկնիմ Բարիկ, ուսանելու համար:

Դ. — Բարիկեան շրջան: Կ'ուսանիմ Սուրպնի և Գոլեմ քը Ֆրանսի հետեւելով և կը կազմուիմ՝ երաժշտութեան և այլ արուեստներու հետամտելով (1908 աշունէն մինչ 1911ի աշունը):

Ե. — 1911ի աշնան կը դառնամ Պուլս և կ'ըլլամ տնօրէն հօրս վարժարանին, 1911ի աշունէն մինչ 1914ի ամառը:

Զ. — Պատերազմը կը ծագի: Մէջս կը զզամ հատզհետէ կազմուիլ զանազան ուղղութիւններու մէջ հասունութեան:

ՇՈՀԱՆ ՊէրՊէլեսն

Առաջնորդական պատօնը տար տարիներ մեծ արդիւնաւորութեամբ վարելէ մերջ, իր հոգեւոր տունը՝ Երևանի վերադարձաւ, շարունակելու համար իր Միաբանի պարագանականութիւնը վաճէն ներ: Իրազեկ ըլլալէ յեսոյ վաճէն պարզած աննախանձելի վիճակին, ինչ եւ ուրիշ Միաբան Հայրե պահանջեցին որ Տեղապահը նախ վեց տարուան եւեւմական հաւուեսուութիւն ներկայացնէ Միաբանական Ընդհ. Փողովին եւ ապա անյաւող ընթացք այս պատրիարքական ընտրքան:

1956 Յուլիս 27 իւ 28ին Միաբանական Ընդհ. Փողով գումարուեցաւ, ուր կարդացուեցաւ 1950-1956 տարեցաններու եւեւմական համարատուութիւնը, որու մասին տրուած է նետեւեալ որոշումը. «Պատ. Միաբանական Ընդհ. Փողովը յազդած այս համարատուութիւնները բնութեացաւ, ինքինիք պատասխանտուութիւննե ազատ նկատելով տպագային»: Փողովը քեւ «ընդունեցաւ» տեղեկագիրը, բայց չփաւերացուց զայն, ինչպէս պիտի եր ընէր բա կանոնի, երկ ուղիղ զած ըլլար զայն: Փողովը որոշած է նաև պատրիարքական ընտրութեան հարցերով ըգբաղելու համար եւեւ հոգիներէ բաղկացած յանձնախումք մը, որ պիտի ուսումնասիրէ եւ տեղեկագրէ մինչեւ Սեպտեմբերի սկիզբը այս հարցին նետ կապուած բոլոր դժուութիւններն ու կարելիութիւնները: Յանձնախումքի տեղեկագրին սացումէն ես Պատ. Ընդհ. Փողովը պիտի անդրադասնոյ պատրիարքական ընտրութեան բուականը նեդելու եւ արտասահմաննեան մեր Միաբանները եւ ժողովի հրաւիրելու հարցերուն:

Սակայն նախկին Տեղապահը Միաբանական Ընդհ. Փողովի այս որոշման ալ գործադրութեան ընթացք չէ տուած:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՊԱՐԱԳԱԿՆԵՐԸ

Յուլիս 28ին, Տ. Տիրան Արքեպիսկոպոս կառավարութենէն հրահանգ սացաւ Յորդանանու եւկրեն նեռանալ 15 օրերու ընթացքին: Տիրան Միքաղան անհրաժեշտ դիմումներն ըրաւ առ որ անկ եր եւ յետանգել տուաւ նեռացման այս հրահանգին զործադրութիւնը:

Սակայն Օգոստ. 19ին յանկարծ Յոր

հրահանգ մը եւս սացաւ Ներքին Գործոց Խոխարառութիւննե որ 48 ժամէն ներանց Յորդանանուն: Տիրան Միքաղան այլիւս համոզուած ըլլալով որ ինք զոհն է Տէրեկեանի կողմէ լարուած «էնքրիկո» մը, եւկրեն նեռանալու այս հուցը յանձնից Յորդանանու Պերազոյն Ատեանին: Այս առքիւ մէջեւ երա անհաւատայի եւ բամբեցուցիչ գրադարակիրը նախկին Տեղապահի խական սուրացրաբեամբ: Զրգաւագիրը գրուած է արտքեւն լեզուով. անոր բարգմանութիւնն է նետեւալը:

Զ Բ Պ Ա Ր Տ Ա Գ Ի Բ Բ Ը (*)

Նորին վասեմութիւն Վարչապետին

Հերդ վասեմութիւն,

Պատիւն ունիմ Զեր վասեմութեան Ներկայացնեւու հետեւեալը.

Այս գիրը Զեր վասեմութեան կը Ներկայացնէ եղիչէ Արքեպատ. Տէրուերեան, Տեղապահէ Յորդանանի թագաւորութեան Հայ Հասարակութեան, յերուասացէմ:

Մօտաւորապէս վեց տարի առաջ Տիրան Արքեպիսկոպոս Ներասոյեան, որ ամերիկեան քաղաքացի է, մուա Յորդանանի Հաշիմական թագաւորութենէն Ներս Ամերիկայէն և զիմում կատարեց բնակութեան արտօնագրի համեր: Բայց Յորդանանին հիմանութիւնը անոր ինքանիքը չկատարեց այն պատճառաւ: որ անոր անունը Ոճային Հետախուզութեան Բաժնի սկ ցանկին վրայ կը զտնուէր, ինչպէս նաև այն պատճառաւ: որ ան Համայնշագարութեան և Միունականութեան քարոզիչ էր, ու տակաւուն այն պատճառաւ: Այս բոլորին Նետեւալը պայմանագրի և թշնամական զիրք բռնած էր Յորդանանի Հաշիմական թագաւորութեան հանդէպ, ժընկէլի ժաղավին մէջ, որ զումարուեցաւ երուսաղէմի միջազգայնացման նպատակաւ: Այս բոլորին Նետեւալը պայմանագրի և թշնամական բարգարարութիւն ստացաւ Յորդանանի Բէկառապատակութենէն: որ պէտք է երկիրը թողու տասնի հինգ օրուան ընթացքին, ինչ որ ըրաւ այն տասն:

Ժամանակ մը առաջ յիշեալ Արքեպիսկոպոսը վերացածաւ այս երկիրը և իր բնակութիւնը հաստատեց Հայոց վանքին մէջ և մնայուն բնակութեան արտօնագրի համար զիմում կատարեց պատճառաւ իշխանութեանց: Ասկայն իր զիմումը չընդունուեցաւ, և յիշեալ անձը, ի հետուկ ատոր, տակաւուն պատճառագրի վանքին մէջ առանց որիէ կրօնական պաշտօն կատարելու, հակառակ անոր որ վանքին հոգեոր իշխանութիւնը առա-

(*) Սայն զրգաւագրի սկզբանականն հարազատ պատճեն մը առած է, դասարանի համանուն՝ փաստաբանը, սոյն պատճենը հաստատաւ փաղապետարանի կիբուն ի դիւնապետին ստորագրութեամբ և սա վերտառութեամբ. «Աղքանականին հարազատ օրինակին է»:

շարկած է իրեն զանազան պաշտօններ զորս մերժած է: Մենք չենք գիտեր թէ ուրկէ զբամ կը ստանայ և կը ժախսէ, քանի որ ժանր և շռայլ են իր ժախքերը:

Զերդ վասեմութիւն, Տիրան Արքեպիսկոպոսը խռովութիւն և շարութիւն պատճառած է հոգեւորականներու մէջ և լայնցուցած է նեղքուածքը անոնց միջեւ: Եւ տակաւին այսքանով չզոհանուով՝ իր ձեռքը երկնցուցած է նաև հայ ժողովուրդին վրայ, առաջ բերելով մեծ երկպառակութիւն և իրողութեանց շարափախութիւն, մինչև այն աստիճան՝ որ անոր բնակութիւնը այս երկրին մէջ զարձած է վտանգի աղբիւր մը ապավութեան տեսակէտէն, շատ մը պատճառներով:

1. — Որեէ պաշտօն չի կատարեր:

2. — Գործնականապէս խռովութիւն առաջ կը րերէ ժողովուրդին և անոնց հոգեւոր առաջնորդներուն միջի:

3. — Ժամանակ մը առաջ ժողով մը զումարած է Ալմանի Հայոց Ակադեմիին մէջ և նոյն ժողովին մէջ խօսած է զրգելով ներկաները որ Միացեալ Հանանգներ գաղթեն և յայտարարելով՝ թէ այս երկիրը իրենց երկիրը չէ և թէ անոնց այստեղ ընակութիւնը, ուրքան ալ երկար ժամանակով եղած ըլլայ, օգուտ մը պիտի չունենայ իրենց:

4. — Այն իրողութիւնը թէ անոր անունը Անքային Հետազոտութեան Բաժնի սկ ցանկին վրայ կը զանուի՛ վճական պազցոյց է որ անոր ներկայութիւնը մեր մէջ այնպիսի զործերու համար է, որոնք հակառակ են պետութեան և ժողովուրդի շահերուն:

5. — Եւ որովհետեւ մենք հարազատ Յորդանացիներ ենք, ծնած այս երկրին մէջ, և կը վայելենք լի ազատութիւն, և կատարեալ հապատակութիւն պարտինք նորին վեհափառութեան թագաւորին և անոր իմաստուն կառավարութեան, մենք չենք կընար ընդունիլ որ այս պրոպականտիստը բնակի մեր մէջ: Հետեւարար կը ինցիրենք Զեր վահեմութենէն որ օրինական միջոցները ձեռք առնէք անոր զէմ և պայն արտաքրած այս երկրէն:

Այս պատեհութեամբ կը ներկայացնենք մեր հաւատարմութիւնը և հպատակութիւնը նորին վեհափառութեան թագաւորին և անոր իմաստուն կառավարութեան:

Կը խնդրենք որ ընդունիք մեր խոր յարգանք ները:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԻՒԹԻՒՆ

Տիրան Մեթոզան տուաւ նետեւեալ զուսպ ներդումնազիրը:

ՀԵՐՔՈՒՄ ԶՐՊԱՐՏԱԳՐԻ

1. — Ես 1950ին Երուսաղէմ եկած և այսուղ մնացած եմ 13 օր, Մարտ 30էն Ապրիլ 12: Այդ առթիւ ամեններն զիմում չեմ կատարած Յորդանանի կառավարութեան՝ բնակութեան արտօնագիր ստանալու համար, ոչ ալ որ է և ազգարարութիւն ստացած եմ նոյն կառավարութենէն՝ երկրէն դուրս ենթելու համար: Այդ թուականին Ամերիկայի մէջ պաշտօնի վրայ էի և բնաւ մտագիր չէի ներուսաղէմ հաստատուելու:

2. — Իմ անունս ներային Հետափառութեան թամնի սկ ցանկին վրայ չէր կընար զումուիլ, որովհետեւ որ է պատճառ չկար առ այդ: Յորդանանի կառավարութիւնը ոչ 1950ի գարնան, ոչ 1952ի ամրան և ոչ ալ 1955ի աշնան իմ Յորդանան մուտքս չէ արգիլած, ինչ որ պիտի ըրած ըլլար, եթէ չիշշ ըլլային նղիչէ Արքազանին վերագրութիւնը:

3. — Բոլորովին սոււ և ստորին քսութիւն է որ ես համայնավարութեան և սիստականութեան քարոզիչը եղած ըլլամ: Ես երկութիւն ալ հակառակ եմ բնական կերպով և բացայաց պատճառներով:

4. — 1950ին գլուխի մէջ գումարուած ՄԱԿի խնամատարական Խորհրդին ժողովին մէջ, որուն մօտ Երուսաղէմի Պատրիարքութեան պաշտօնական ներկայացուցիչն էի, Յորդանանի կառավարութեան զէմ հրեեք զիրք չեմ բռնած: Ընդհակառակը, արքաբական տեսակէտին և շահերուն ինպատ խօսած եմ, ինչպէս կարելի է տեսնել յիշեալ ժողովի ատենագրութեանց մէջ:

5. — Անցեալ տարւոյ Դեկտեմբերին երբ Երուսաղէմ բնակութեան արտօնութիւն խնդրեցի կառավարութիւններ, ստացայ զայն առանց զբժուարութեան: Երբ այս տարւոյ սկիզբը զիմում կառարեցի այդ արտօնութիւնը նորոգելու համար, կառավարութիւնը իր քննութիւնը կատարելէ ետք զարձեալ տուաւ ինձ այդ արտօնութիւնը:

6. — Իմ ծախքերս Երուսաղէմի մէջ շատ համեստ են: Անոնք շատ վորք մէկ կառարակը կը կազմն այն անձնական ծախքերուն՝ զորս կ'ընէ նղիչէ Արքազան, հակառակ որ մեր Աթուակէն ստացած ամսականները նոյնն են, միւս եւ լուկոսոսներու հետ:

7. — Բոլորովին անհիմն քսութիւն է ըստ թէ ես խռովութիւն յարուցած եմ Միարանութեան և ժողովուրդին մէջ: Իմ ուղիղ կեցուածքիս մասին վկայած են արդէն Յորդանանի հայ ժողովուրդը և Միարանութեան ողջամիտ մասը՝ վեհափառ թագաւորին ուղղեալ իրենց զիրքեալ:

8. — Ամմանի Հայ Ականքին մէջ տրուած թէ յահեղանին վրակման խօսքիս մէջ, խօսած եմ

հայ լեզուի կարեւութեան մասին և բնաւ չեմ թելազրած որ հայեր այս երկրէն Ամերիկա գաղթենքն : Աս համոզաւով հակառակ եմ հայերուն լինքաւոր Արեւելքէն դեպի արեւմուտք գաղթելուն :

9. — Եղիշէ Արբազանը Յորդանանի մէջ ձնած չէ . այլ ձնած է վանի հայնիմիրան զիւղին մէջ . 1910ին և Եղիշէ Արբազանի գործերուն ձնաօթանքը զիւղն թէ որքան Հարազատ Յորդանանցին է ան:

ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊՈՒ .

31 Օգոստ 1956
Խորուսէմ, Արշակունյաց

Դերավոյն Ատեանը առանց խնդրոյն եւրիսան մէջ մնելու, նկատելով որ Տիրան Արքանու, երկրէն նեռազման հրամանափիր տրուծ եր ոչ - օրինաւոր խողովակներով, զայն չեղեալ նկատեց Մեպ. 17ին : Հոգեկան թիրեւացման ընդհանուր մբնուրս մը համարկեց ամենիր :

Դասկին Տեղապահը իմանալով որ իր գրպատագիրը մէջեղ հանուած է, եւ տեսնելով որ արտասահմանն նախանձախնիք Միաբան Հայեր Ս. Արոռ կը հաւաքուին, նախազգալով զալիքը եւ Միաբանուրիւնը անցորդուրեան մատնելու կանխամածուրեամբ, Մեպ. 19ին, առանց Միաբանուրիւնը կամ Տօնուն Փողովի տեղեակ պահելու մեկնեցաւ Երուսալմէկն : Միաբանուրեամ գիտակից տարեր երբ իմացան այս փախուասր, եւ լսելով որ ան Ամենն կը մնայ նոյն գիշերը, յաջորդ օր առաւոս կանուխ երկու Միաբան Հայրեր դրկեցին որպէսզի անոր յանձնեն նետեալ զիրը :

19 Սեպտ. 1956

Դեր. Տ. Եղիշէ Արքեպու. Տէրտէրեան
Տեղապահ Առաքելական Ս. Աթոռոյն
